



Կրիստի յաւ' 1 0 8

Լոյս է տեսնուում Եւրոպայի մի անգամ կիրակի օրերը

№ 27 կիրակի 12 յուլիսի

իննետրորդ տարի 1898



Մ ա յ Ր ա կ ա ն Ե Ր Չ ա ն կ ո շ ի Ն Ե .



# Ս Է Ա Լ Լ Ի Ի Մ Ս Ա Յ Ի

(Մի մուսուլման հերոս Ղարաբաղում)

(Ձարուհակոբյան \*)

Աւրացող Լաչլանները վերին աստիճանի կատաղի, խիստ, անգութ բարբարոս էին: Նրանց համար ոչինչ չարգելի, ոչինչ նւիրական, ոչինչ սուբբ չըկար. չըկար և մի տեսարան, որ կարողանար փոքր ի շատէ վրդովել ժայռեղէն սրտերը, կոթողուտ, գերեվարութիւն, աւեր, աւար, արիւն նրանց հողուն անհրաժեշտ սնունդ, լաց, աղաղակ, շիւան, հողեւարի կերկեր հառաչանք, նրանց զգացմունքը գրգռող նւագ: Մանաւանդ երբ գործ կունենային այն անձանց հետ, որոնք զղւանքով էին վերաբերում, երեսաներին տալով դաւաճանութեան անքաւելի, մահառիթ մեղքը, կեղտը, սուր ու բիր վերցնելով մեր ու կրօնի և նահատակուած ազգի անհաւատարիմներին ջնջելու... Ուրեմն երեւակայեցէք Լաչլանների դրութիւնը, աւելի վայրագ ծարաւի արեան գազաններ բորբոքում են կրկնակի վրիժառութեան չար, ուժղին տենչով... Արէժ թշնամուց, վրէժ և այն անձերից, որոնք ի մօտոյ և լաւ են ճանաչում կեղտոտուած, ընկած, փչացած մարդը... Նրանք տոչորուած առիթ էին որոնում բանակներով արեան դաշտ խաղալու, մայր երկրի ձորերն ու հովիտներ հաւատարիմ և անհատարիմ հարազատների զրականց շեղջերով ծածկելու, արիւնով ոռոգելու... Խանը տալիս էր այդ առիթը:

«Մեկիք-Աղամ պիտի ընկնի»... — ատամները կրճտելով ասում էին Լաչլանները:

— Ասպատակ սիւռելով ջլատենք գեաւուրների ոյժերը, ապա յարձակւինք Քաղաքատեղ:

Խորամանկ կարգադրութեամբ յանկարծ Չուշուայ, Նախիջևանի խաները ասպատակ սիւռելին Ջրաբերդի, Խաչէնի, Գիւլիստանի գաւառները, այնպէս որ գրեթէ անհնարին էր դիմադրուել, առաջն առնել երեք մեկիքների միացմամբ:

Կրտսեր Լաչլան անցած մի ասպախմբի ղուլի՝ զիմել էր Ջրաբերդի սահմանները, Փաթալու հրամանատարները արդէն աւերում են Խաչէն, Գիւլիստան:

Իսկ Աւաղ-Լաչլան մի քանի հարիւրով արշաւում է գէպի Քաղաքատեղ, Մեկիք-Աղամի վրայ: Կայծակի արաղութեամբ լուրը հասնում է Մեկիքին:

Խորին իրարանցման, յուզման, վրդովման է մատնուած Քաղաքատեղ աւանը, որ Մեկիք-Աղամ վերանորոգելով ամրացել է այնտեղ: Իրար անցած, ահաբեկ ժողովուրդը թաղցնում է իր փողը, գոչքը: Մեկիք-Աղամ ինչ անելիքը չըգիտենալով՝ շարած դիմում է Մեկքում-Քէօխուայի խորամանկութեան կամ դիւանադիտութեան:

Առաւօտեան, սււադէմ ապառաժօտ լեռների գագաթներից վարդագեղ ցոլքերով բարձրանում է հրատապ արևը. պայծառ երկինք քնաթաթախ ժպտում է թռչնոց դէմ, որոց գալլալիկը թարթառի մշտամուռնչ ձայնին խառնելով՝ յօրինում է մի տեսակ զւարթ մեղեդի աղմկելով մթնոլորտը. հովիտ, բլուր, դաշտ, դարաւանդ գոհարափայլ ցօղերով շաղախուած կարծես օրօրում են բնական նւագի յափշտակիչ ներդաշնակութեամբ: Վաղուց բացուած են ամբողջ դռներն ու լուսամուտները: Մեկիք-Աղամ մտալլամած դէմքով, մտախոհ ճեմում է զարդարուն դարպասի երկայնքով, պաբոլիկ ընտիր գունազեղ գորգեր խափանում են քայլափոխի ձայները:

— Չէ, ա՛ Մեկքում, մենք անկարող ենք ելուրացողին դէմ դնել զօրքով, քանի որ Խաչէնի, Գիւլիստանի տէրերը չեն կարող օգնութեան հասնել... անկարող ենք նաև պաշարման վիճակին դիմանալ: Երկու հանգամանքն ևս աննպաստ են մեզ: Գտնելու է մի միջին ուղի...

— Մեկիքն ապրած կենայ, ես ուրիշ ծրագիր եմ կազմած այդ մասին և, իմ կարծեօք, միակ միջոցն է դա:

— Ապա... Մեկքում...

— Մեծ-Լաչլանը մեզ վրայ է գալիս Սարսանգի դաշտով, կամրջից անցնելով պիտի մտնի հաւաք ձորը, թարթառի ափով Էլ-Շօլի, Թիւնկ-Աղբիւրի այնտեղից ուղիղ այստեղ:

— Լաւ, դա նրա արշաւանաց ուղին է:

— Այո՛, մեկիքն ապրած մնայ, եթէ մենք ունենանք զօնէ մի քաջ դարձանամուտ Սարսանգի ձորերում կամ կամրջի գլխին, որ կարողանայ սպանել միայն Լաչլանին, կազատենք փտանդից, որովհետև՝ անդլուխ զօրքը չըպիտի յանդգնի արշաւելու, այլ պիտի նահանջի յետ: Այս եմ գտնում միակ միջոցը:

— Իսկ այնուհետև՞:

— Այնուհետև կրմտածենք...

Մեկիքը մի քանի բոպէ լուելով մտածեց, յանկարծ Մեկքում Քէօխուայի մօտ կանդնելով, հարցոյց այլալլած ձայնով.

\*) Տես Տարագ № 26.



—Ապճ, Մեղքում, ո՛ւր գտնենք այդպիսի մի քաջ մարդ:

—Մեղքն ապրած կենայ, առիւծի բռնը միշտ կորիւն կունենայ իր մէջ պահած: Խոստացէք պատիւ, Հարստութիւն, յանկարծ առիւծների Հայրենիքից դուրս կրգայ մի կորիւն: Դեռ չէ դադարած Ղարաբաղը Հերոսների օրօրոց լինելուց:

—Տնչ երկինք՝ որ ասածիդ պէս լինի:

—Կրկինի, թող Մեղքը վստահ սկսի...

—Մեղքում, - ընդհատեց նրան, - արա՛ ինչ որ կամենաս:

—Այսօր խոկ կըհանեմ մունետիկ, կըյայտարարեմ Մեղքի անունով, թէ ով որ կամենում է քաջի անուն ժառանգել, վրէժ լուծել, Հուացնել արշաւոց դուրսը նրանց զօրադուլի Լաչինն սպանելով, Մեղքը խոստանում է գիւղով, փողով և այլ և այլ պարգևներով վարձատրել նրան...

— Չատ լա: Եթէ կատարել...

—Աստծով, Մեղքն ապրած մնայ, կըկատարել: Մունետիկն սկսեց շրջել փողոցներում և յայտարարել:

—Ուրացող Լաչինը, քաղաքացիներ, գալիս է մեզ վրայ, չըկա՛յ ձեր մէջ հաւատ, ազգ, պատիւ սիրող մի տղամարդ՝ որ գնայ, դարանամուտ լինելով սպանէ նրան... ապա մեծ պատիւ, պարգև ստանայ Մեղքից:

Ի դուր մունետիկը տրաքեցնում էր կոկորդը. ո՛չ մի տեղից չէր լուում մի անձնագուհ քաջ մարդու յանձն առնելու աւետիքը: Մեղքը տխրութեամբ Մեղքումին է դառնում:

—Միթէ, — աղաղակեց, — քո առիւծների Հայրենիքից, Մեղքում, պակասեցան կորիւններ, միթէ չըկայ մի բազուկ, մի սուր, մի գնդակ՝ որ հարածէ Հասարակաց թշնամու սիրտը... նրա պիղծ արիւնով ոռոգէ Ղարաբաղի ժայռերը... էհ, ուրեմն, երբ ոչ ոք չըկայ՝ ես պիտի գնամ...

—Կայ, Մեղքն ապրած կենայ, — լսեցաւ մի ձայն և առաջ եկաւ Մեղքում— Քէօխալի միակ որդին՝ Սէալլիւմ-Սալին:

Մինչդեռ առաւօտեան յուզում էր աւանը, Լաչինի սոսկառիթ անունը ջլատում էր շատ քաջերի կորովն ու լրջութիւն, քաղաքի հեռուոր անկիւններէ մի աւերակ փլատակի տակ խօսում էին միմեանց հետ մի պատանի և մի գեղեցիկ օրիորդ:

Պատանին հսկայ կազմածքով, զբաւիչ, թուխ արևակէզ դէմքով, աւելի ջղուտ՝ քան մսուտ ջինջ, մաքուր, հրատի պէս վառվուռն աչքով, ուն, փայ-

լուն աղեղնաձև յօնքով, որի տակ շողում էին սև խաղողաձև բիբերը մի կիսավայրենու Համարձակութեան, յանդգնութեան շուք տալով առնացի գեղեցիկ դէմքին: Սէալլիւմ-Սալին է դա: Թողովուրդը արժանապէս է վարած Սէալլիւմ (ազատ) Սալի (Յսալի) հետ, տալով նրան արժան և յարմար մականուն: Պատանի Սալին գործով ցուցել էր իր անվախ քաջ, յանդուրդ սիրտն ու բազուկը, իր դիժած, սզգասէր, կրօնասէր, անձնուրաց հրկին մի քանի սովորական կռիւների մէջ, վասնորոյ Սէալլիւմ (ազատն) անւանած էր նրան Ղարաբաղ:

Նա այժմ պստանեկան Հասաիւմ, մուացած երկիւզ, արհաւիրք, խօսում է իր սիրած աղջկայ հետ:

Խարտեաշ մազերով, սուր ակնարկով, մսուտ միջագեղ մի աղջիկ է Սէալլիւմ-Սալին սիրական Մարօն:

Ղարաբաղում հազադէպ է տեսնել մի երիտասարդ իր սիրած աղջկայ հետ. այնտեղ տակաւին թագաւորում է Հարեմական դրութիւնը իր անողոք խստութեամբ, բայց, ինչպէս շատ անգամ տեսնում ենք օրինակներ, այնպէս էլ Սէալլիւմ երեւի իբրև մեծ ոյժ, Հասկանալով իր արժէքը չէր ենթարկւում տիրող կոպիտ օրէնքին, այլ բացառութիւն էր կազմում: Իբր յանդուգն մարդ անվախ տեսնում էր և ժամերով խօսում իր սիրականին հետ: Մարօն զբաղւած էր իր ճակատից քաշարած արծաթ դրամների հետ խաղալով և շեղակի իր սիրած տղամարդուն նայելով:

— Ա՛յ Մարօ, — ոգևորւած խօսում էր ապազայ Հերոսը, — եթէ իմ ջանն ուղեւ, պատրաստ եմ տալ, ա՛ տնաքանդ. ի՛նչ արած է քեզ ջրատար Սալին, որ ամեն օր չես գալիս էստեղ... մի քիչ զրկց տալու... չէ՛ ախար մի կրակ ձգած էրում ես իմ ջանն, ո՛նց կարամ մի օր առանց քեզ տեսնելու դնջանայ:

— Ա՛ Սէալլիւմ, քեզ մատաղ գնայ Մարօն, ինչո՛ւ ես էտեց մուանում իմ արածը... ախար ամեն անգամ չեմ կարողանում միջոց գտնել, գալ կս չուրր, տնաքանդ մէրս աչք չի վեր առնում ինձանից, Հասկացել է, որ տեսնում եմ քեզ հետ... Իս օր էլ բոլոր քաղաքն իրար անցած է, ասում են մեծ-Լաչինը գալիս է մեր վրայ: Ինչ որ ունեն հաւաքում, թաղում են տան քունջ ու պուճախներում. ես օգտւելով իմ մօր գործով զբաղւած լինելուց, դուրս շտապեցայ, եկայ քեզ մօտ...

— Հա՛, էն ուրացող շունը գալիս է:

— Մեղքը, ասում են, մունետիկ է հանել, բայց՝ մի կտրիճ չըկայ, որ գնայ շանսատակ անի Լաչինին:





ZABERD



— Կտրիճներ կան... մինն անպատճառ դուրս կրգայ նրա դէմ, հօ էտենց մնալու չէ:

— Ո՛ւր է, քանի օր է մունետիկը բղաւում է, հա բղաւում:

— Մարօ ջան, ուզում ես որ Լաչինը սատակի:

— Վա՛, վո՞նց թէ ուզում եմ:

— Որ էտենց է, քեզ մատաղ գնայ Սալին, էս օր եկել եմ քեզ «մնաս բարով» ասելու, ես գնալու եմ նրա դէմ...

— Դո՛ւ... Սալի՛...

— Այո՛, ես, իմ մտքումը դրած եմ անպատճառ դնալ:

Մի մուսլ տիրութիւն սաւառնեցաւ Մարօի դէմքին վրայ: Այնուամենայնիւ չըկարողացաւ իր միտքը յայտնել, որովհետեւ հեռուից երևում էր մի կին, որ Մարօյին էր նայում բղաւելով:

— Տուն արի, ա՛յ ծամը կտրած:

— Երթաս բարով, — մրմուսաց Մարօն ու հեռացաւ: Սէպլիւմ-Սալին ևս ակնթարթի մէջ աներևութացաւ և երակներէ մէջ: Ապա հեռանալով դիմեց Մեկիքի ապարանը՝ ուր մենք նրան տեսանք առաջին անգամ:

Սէպլիւմ-Սալին ներկայանալով Մեկիքին, իր հօր ներկայութեամբ, յայտարարեց թէ ինքը պիտի գնայ Լաչինին դէմ, թէ մի ներքին ձայն ապահովում է նրան կատարեալ յաղթութեան մասին:

Մեկքում-Քէօխաւայի երեսի գոյնը թուաւ, աչքերը մթնեցին, կարծես կայծակ ընկաւ զլիւին, զալարեցաւ հայրական աղիքը իր միակ որդու սոսկալի որոշման, յանդգնութեան դէմ, բայց իսկոյն անհետացաւ խռովութիւնը, թշերը գունաւորեցան վերստին, աչքերը շողացին աւելի պայծառ, մի վսեմ զգացում յաղթած էր որդեսիրութեան, վայրկենական, ահաւոր մի հարածով, ինչպէս իսկոտ փոթորկին յաջորդում է մի ձանձրացուցիչ անդորրութիւն, սև ամպերով, թուղպերով ծրարում են բարձր լիրանց զագաթներ, նոյնպէս էլ Մեկքում Քէօխաւայի հողին յանկարծական բուռն յուզումից յետոյ, խաղաղում է տարօրինակ անդորրութեամբ: Իբրև հայր սոսկում է, իսկ իբրև հայ ուրախանում: Ինչպէս ասենք երկու խօսքով՝ հայրենասիրութիւնը յաղթում է հայրական գորովին, կաթողին սիրոյն: Զարհուրում է հայրը, դա իր միակ որդին է, միակ յոյսն է, պիտի գնայ պատանեկական անփորձութեամբ մի հրէշի դէմ: Ուրախանում է իբրև հայ, այո՛, առիւծների որջին մէջ չէ պակասած կորիւն, և ինչ, այդ կորիւնն իր արիւնն է, իր կեանքն է,

որ վասն կրօնի և հայրենեաց այդ զուգափառ, զուգապատիւ Ասուածութեան՝ խլում է սուրը պատեանից մի չարագործ պատժելու:

— Ո՛հ, Սալի՛, դո՛ւ — մրմուսաց հայրը ցաւագին:

— Այո՛, հայր իմ, միթէ ուրախ չե՞ս լինում դու:

— Սա քո որդին է. Մեկքում, — հարցուց իշխանը շփոթելով:

— Այո՛, Մեկիքն ապրած կենայ, իմ Սալին է:

— Լսի՛ր, Սալի, — ասաց Մեկիքը անկեղծ համակրութեան զգացումով յուզած, ձեռը պատանու ուսին դնելով, — հայրենիքի ճղնաժամին մի փրկող բազուկ էր հարկաւոր, դու ներկայանում ես յօժարակամ. լաւ, որդեակ, կ'ընդունեմ և ընդունեցի ենթապրէ թէ զնացիր և Լաչինի գլուխը ինձ բերիր: Որովհետեւ քո ծնողների միակ յոյսն ես, կըտրիճս, քեզ չեմ թողնում գնալու:

— Ո՛հ, Մեկիքն ապրած կենայ, — շշնչեց Սէպլիւմ աչերը արտաուօք լեցնելով, — ես պիտի գնամ... գնամ և ոչնչացնեմ մեր հայրերի հաւատն ուրացողին, ազգի թշնամուն:

— Դու անփորձ ես, քաջ պատանի...

— Ո՛չ... ես ս'ղանել եմ մի քանի վարագ...

Մեկիքը ժպտելով դարձաւ Քէօխաւային, որը ձեռները խաչաձև ծալած, ակնապիշ, հիացած, արձանի նման կանգնած նայում էր որդուն:

— Ա՛յ, Մեկքում, դու ինչ կասես, — հարցուց իշխան Աղամ:

— Ես — խռոված ձայնով պատասխանեց Մեկքում, — ես այն եմ ասում ինչ որ Սալին ասաց: Հայրենիքը վտանգի մէջ է, թող գնայ իմ որդին. — Սալինը գրկելով, — ա՛յ անուշ որդիս, Այն ու խաչը քեզ պահապան, օգնական թող լինեն, գնա՛ ցոյց տուր այն ուրացողին, թէ կարող ես ազգիդ վրէժը լուծել...

— Հայր, — ընդմիջեց Սէպլիւմ, զւարթ, ողևորւած, — հայր, չեմ կարող հանգստանալ այդ ուրացողի արարքը լսելով... միթէ ես մեռած եմ, որ նա յանդգնի քրիստոնէի երկիրն աւերել, գերել, կոտորել... մի կրակ է ընկած իմ ջանն, այրում է ինձ... չըպիտի հանգչիմ մինչև...

— Ինձ, — ընդհատեց հայրը դողդոջուն ձայնով — ես ցաւում եմ իբրև հայր որ իմ միակ որդիս, աչքիս լոյսը գնում է հօր Լաչինի դէմ... բայց ուրախ եմ իբրև հայ մարդ, որ մեր քաջերի երկրում կայ մի անվախ սիրտ, անսասան բազուկ ուրացողին մահ տալու պատրաստ և այդ ձեռքը, Սալի, հպարտանում եմ որ քոնն է, որ իմ միակ զաւակիսն է...



27

Մեկիքը չըկարողացաւ իր հիացումը, չուզումը  
 քաղել: — Քէօխան, ամենաներշնչանիկ մարդը, հայրը,  
 հայր դու ես:

Սէալլիւմ-Սայիի պահանջանաց համեմատ հօրից  
 մունետիկ արձակեցաւ, գտնելու և մի այլ մարդ,  
 որ զինակցի պաշտօնով գնայ Սայիի հետ միմիայն  
 հրացան լցնէ, մաքրէ և այլն:

Երբ Սէալլիւմ-Սայիի յանձնառութեան համբարը  
 ծանուցեցաւ, դուրս եկաւ և մի այլ քաջատիրոս  
 մարդ, Մոխրաթաղեցի Սէակ կամ Սհօ անուն կրտ-  
 ընէ, ճարպիկ, յանդուգն երիտասարդը: Իսկոյն Մե-  
 լիքը յանձնեց նոր զէնք, ռազմամթերք, պաշար և  
 մեծ ուրախութեամբ ճանապարհ դրեց նրանց: Մե-  
 քում-Քէօխան թախծալից դէմքով ընկերացաւ մին-  
 չև քաղաքադուռն, ապա քաջ սրբույն զուրկ հայ-  
 րենի կրծքին սեղմելով:

— Սայի, — մրմնջեց հեծկլտալով, — Սայի, յաղ-  
 թող վերադարձիր կամ մեռիր հերոսական մահով:  
 Քո մահն իսկ միթարութիւն պիտի լինի հօրդ  
 որդեգորի սրտին:

— Կենդանի կրվերադառնամ, — պատասխանեց  
 Սայի հօրը զրկից խուսափելով, — դնա, հայր իմ,  
 էլ մի լար...

Տակաւին երկար նայում էր Քէօխան որդու  
 ետևից, մինչև նրա անհետանալը ձորի մէջ:

Ս է Յ Ս Ա Ն

(Կրեարուճակի)

ԳԱՐՆԱՆ ԾԻԾԵՆՈՒՆԱԿԻՆ

(Տ ա ռ ա ս ջ շ ք ռ ի յ ց)

Ահ, սիրէս սլանալ, սիրուն ծիծեռնակ,  
 Դէպի բարձրութիւն երկնի կապուտակ.  
 Կարեկից եղիր, թռիւր, սլացիւր  
 Դէպ իմ անձկալին, դէպ իմ սիրուհին,  
 Աետք՝ դարնան դժբախտին եղիր,  
 Թող պարզի նրա տեսք, հայեացք սիրուն:

Սիրուն ծիծեռնակ, քո թռիկներով  
 Քնքշաբար զիպիր նրա այտերին.  
 Լորենու ծաղիւնք թօթափիր մեղմով,  
 Նորա վարվաւն շարձող երեսին.  
 Երջանիկ կեանքի քաղցր երազներ,  
 Թող ներշնչեն նրան սիրուն ծաղիկներ:

Սիրուն իմ ծիծառ, թէ գալուս մասին  
 Սկոէ նա քեզնից մի բան հարցնել,  
 Ասա դու նրան, որ այն ծովային

Կապուտակ մաքուր ու ջինջ ալիքներ  
 Պարզ շնչում են խօսք մեր ականջին  
 Եւ հրապուրում մեզ դէպի օտար երկիր:

Սիրուն ծիծեռնակ, երգիր սիրելինս  
 Դու անվերջ երգն իմ սիրոյ մասին.  
 2Է որ սէր շնչեն մարդիկն աշխարհիս,  
 Սիրուց ստանան ամենքն իր բաժին.  
 Սէր շնչէ ոսկէ ճառագայթ արեգին,  
 Սէր շնչէ նոյն իսկ այս անհոգ քամին:

Սիրուն ծիծեռնակ, կեանքն է մի թռիչք,  
 Ուրախ ցնծալով մարդկանց այդ երգիր,  
 Թող վիշտ մարդկային լիշէ միշտ այդ միտք,  
 Թող պարզէ թւեր թողնել այս երկիր,  
 Թող նա խիղախէ համարձակ թռչել  
 Յաղթական շքով դէպ բարձր երկին:

Խաչատուր Բահ. Փանկանց

ԼՈՒԿՐԵՅԻՍ ԲՈՐՋԻՍ

Ողբերգութիւն երես արարածով  
 Վ Ի Կ Տ Ո Ր Հ Ի Ն Գ Օ ՚ Ի

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆԷ

Դուքս Ալֆօնս դէԿատէ, Ֆէրրարայի իշխողը.  
 Լուկրեցիա Բորջիա, սրա կինը.  
 Ջեննարօ, վենետիկեցի երիտասարդ ազնական.  
 Գուրէտտա, Լուկրեցիայի զաղտնի լրտեսը.  
 Մաֆֆիօ Օրսինի } Երիտասարդ վենե-  
 Ջէպպօ Լիւքստատօ } տիկեցիք,  
 Ապոստոլօ Գազէյա } Ջեննարօյի բարե-  
 Ասկանիօ Պետրուչչի. } կամները:  
 Օլիվէրնօ Վիալլոցցօ.  
 Բուստիգէլլօ } Խուզարկուներ  
 Աստոլֆօ }  
 Իշխանունի Նէզրօնի.

Գոնապաններ, վարդապետներ, ազնականներ, մանկ-  
 լախիկներ, պահապաններ.  
 Անցր պատահում է նախ վենետիկում, ապա Ֆերրարայում  
 XVI դարում:

արարած առաջին

ՎԻՐԵՈՐԵՆԵՒ ՓՈՒՐԵՆ ՎԻՐԵՈՐԵՆԷ

ՏԵՍԱԲԱՆ ԵՐԲՈՐԲ

Գուբէսսա, Լուկրեցիա եւ Ջեննարօ (սոս):

Լուկրեցիա: Սա քնած է: Տօնախնջութիւնը  
 երեւի սրան յոգնեցրել է: Որքան զեղեցիկ է... (Ես-  
 նալով) Գուբէտտա:

\*) Տես Ցարսկ № 26.





L e p t e r g w a t e r s p h i e

Die Frau Sophie in ihrem Zimmer  
aus dem Roman "Die Leiden der jungen Werther"

Die Frau Sophie in ihrem Zimmer  
aus dem Roman "Die Leiden der jungen Werther"

Die Frau Sophie in ihrem Zimmer  
aus dem Roman "Die Leiden der jungen Werther"

1805

1805





Б и ж с и н р п л с а б п ф



**Գուրբէսսա:** Խնդրեմ կամաց խօսէք, ձերդ մեծութիւն: Այտեղ ես ոչ թէ Գուրբէտտա եմ, այլ կոմս Բէլեբրանա, կաստիլիացի աղնւական, իսկ դուք Նէպոլտցի մարկիզուհի Պոնտէկադրասո: Մենք չքաղտք է ցոյց տանք, որ միմեանց ճանաչում ենք: Գուք ինքներդ էք այդպէս հրամայել: Չըկարծէք, որ ձեր տանն էք: Գուք այժմ գտնուում էք Աննետիկում:

**Լուկրէցիա:** Աշմարիտ է, Գուրբէտտա: Բայց այտեղ բացի այս քնած երիտասարդից ոչ ոք չքաղտք: Մենք հանգիստ կարող ենք մի քանի բոպէ խօսել:

**Գուրբէսսա:** Ինչպէս որ կամենայ ձերդ մեծութիւնը, բայց թող տէք ինձ խորհուրդ տալու ձեզ՝ չըհանել դիմակը երեսից: Կարող են տեսնել ձեր դէմքը:

**Լուկրէցիա:** Ոչինչ, ինձ այտեղ ոչ ոք չէ ճանաչում և այդ պատճառով ինչ հարկ կայ թաքնւելու: Բայց եթէ մինչև անդամ ճանաչէին էլ ինձ, ինչու պէտք է վախենամ:

**Գուրբէսսա:** Բայց չէ որ մենք Աննետիկումն ենք. այտեղ մարդիկ կատարեալ ազատութիւն են վայելում, իսկ դուք շատ թշնամիներ ունէք: Կասկած չըկայ, որ հասարակագետութիւնը չի համբերիլ, երբ մէկը ձեր կեանքին սպառնայ, այնուամենայնիւ ձեզ կարող են վիրաւորել խօսքերով:

**Լուկրէցիա:** Գու ճշմարիտ ես ասում: Միմիայն անունս սարսափեցնում է ամենքին:

**Գուրբէսսա:** Բայց այտեղ ոչ միայն վնաստիկեցիք են. այտեղ կան հումէացիք, նէպոլցիք, բոմանիոններ և լոմբարդացիք — միով բանիւ ամբողջ Իտալիայի ժողովուրդը:

**Լուկրէցիա:** Միթէ ամբողջ Իտալիան ինձ արհամարհում է: Սարսափելի է... Վերջապէս հարկաւոր է այս բոլորը փոփոխել: Ես երբէք չեմ ծնւած չարութեան համար և այս բոպէիս ես աւելի համոզւած եմ դրանում, քան երբ և իցէ... Մինչև այժմ ես հետևում էի նախահայրերիս օրինակներին... Գուրբէտտա:

**Գուրբէսսա:** Ի՞նչ կըհրամայէք:

**Լուկրէցիա:** Ես քեզ պէտք է հրամաններ տամ, որ և պէտք է իսկոյն յայտնես Սպոլէտտո, կատարելու համար:

**Գուրբէսսա:** Լսում եմ: Ես միշտ պատրաստ ունեմ չորս թամբած ջորի և այդքան էլ սուրհանդակ:

**Լուկրէցիա:** Ի՞նչ եղաւ Գալէաս Ալկաջօլին:

**Գուրբէսսա:** Նա դեռ բանտումն է: Սպասում է, մինչև որ ձերդ մեծութիւնը հրամայի կախել նրան:

**Լուկրէցիա:** Իսկ Բուօնդէլմոնտէն:  
**Գուրբէսսա:** Նա էլ բանտումն է: Իե՞ս չէ հրամայած նրան խեղդամահ անելու:

**Լուկրէցիա:** Իսկ Սպադակապին:  
**Գուրբէսսա:** Համաձայն ձեր ցօնիւթեան Չատկի օրը հաղորդութեան ժամանակ սկիհով պէտք է թոյն ընդունէ: Մնում է միայն վեց շաբաթ, որովհետև այժմ բարեկենդան է:

**Լուկրէցիա:** Իսկ Կապրային:  
**Գուրբէսսա:** Նա դեռ ևս համարում է Պէդարօի եպիսկոպոս, բայց չի անցնիլ մէկ ամիս անգամ և նա կըմեռնի, որովհետև նորին սրբութիւնը հռոմի պապը, ուշադրութեան առնելով ձեր խնդիրը, արդէն ձերբակալել է նրան և պահում է Վատիկանի բանտերից մէկում:

**Լուկրէցիա:** Լսեցէք, ուրեմն, Գուրբէտտա: Իսկայն և եթ իմ կողմից գրեցէք նորին սրբութեանը, որ ներէ Կապրա եպիսկոպոսին: Յետոյ կարողալրեցէք, որ իսկոյն և եթ ազատեն Ալկաջօլին, Մանֆրէդ Կուրցօլին, Բուօնդէլմոնտէին և Սպադակապին:

**Գուրբէսսա:** Սպասեցէք, ձերդ մեծութիւն... շունչս կտրւում է... Աստուծ իմ, այդ ինչ տեսակ հրամաններ էք արձակում: Այդքան էլ սղորմած լինել և ներել...

**Լուկրէցիա:** Քեզ համար, կարծեմ, միևնոյն է — չար գործեմ թէ բարի, քանի որ աշխատութիւնը լաւ է վարձատրւած:

**Գուրբէսսա:** Ես նրա համար նկատեցի, որ բարեգործութիւն անելը աւելի դժուար է, քան թէ վատութիւն: Խեղճ Գուրբէտտա... ինչ է մնում անել ինձ այժմ, երբ ձերդ մեծութիւնը կեղծաւորութեամբ է դարձել հեզ և սղորմած:

**Լուկրէցիա:** Լսի՛ր, Գուրբէտտա: Ես միշտ համարել եմ քեզ իմ մտերիմ բարեկամ...  
**Գուրբէսսա:** Այ՛ն, ձերդ մեծութիւն: Ահա տասն և հինգ տարի է, որ ես ճշտութեամբ կատարում եմ ձեր բոլոր հրամանները...

**Լուկրէցիա:** Ուրեմն ասա՛ ինձ, իմ հին ընկեր կարիք չե՞ս զգում երբեմն կեանքի փոփոխութեան մէջ: Չէ՞իք չանկանալ արդեօք երբեմն գործը այնպէս տանել, որ այժմ մեզ անիծող մարդիկ օրհնէին մեր անունը... Միթէ քիչ մեղք ունիս դու քո սրտում:

**Գուրբէսսա:** Ես համոզւած եմ, ձերդ մեծութիւն, որ դուք ամենակարճ ժամանակամիջոցում ամենառաքինի կիւր կըդառնաք աշխարհիս երեսին:

**Լուկրէցիա:** Միթէ, Գուրբէտտա, մինչև այժմ մեր անունը, մեր փայտառակ համբաւը, մեր սպա-



նութիւնները և թունաւորութիւնները մասին տա-  
րածւած դարձելի ձայները չեն տանջում քո խղճմը-  
տանքը:

**Գուրեհաս:** Ո՛չ: Երբ ես գրօնում եմ Սպօլէտ-  
տօի փողոցներով, յաճախ լսում եմ կիսաձայն ար-  
տասանած հետևեալ խօսքերը. «Հը՛մ, ահա թունա-  
ւորող, մարդասպան և դաժան Գուրեհտտան:» Բացի  
դրանից աւելացնում են անւանս հետ հրապարակա-  
կան լիշոցների մի ամբողջ շարք: Պատահում է և  
այնպէս, որ այդ քաղաքավարութիւնը չի արտայայտ-  
ւում բառերով, այլ կարելի է նրան նկատել գրօ-  
նող ժողովրդի աչքերում: Բայց ինչ անենք: Ես նոյն-  
պէս և սովորել եմ վատ փառքին, ինչպէս պապա-  
կան դիւնորը պատարագին:

**Լուկրեցիա:** Բայց չե՞ն գգում դու արդեօք, որ  
այդ բոլոր լիշոցները կարող են սխի և արհամարանի  
պատճառ դառնալ քեզ համար և բոյն դնել հէնց  
այն սրտում, որի հետ դու կուզէիր բարեկամութիւն  
հաստատել: Մի՞թէ՛ դու ոչ ոքի չես սիրում, Գու-  
րեհտտա:

**Գուրեհաս:** Ես էլ կուզէի իմանալ, ձերդ մե-  
ծութիւն, դուք էլ սիրում էք մէկին թէ չէ:

**Լուկրեցիա:** Գու իմ զգացմունքները չես կարող  
հասկանալ .. անկեղծ ասեմ: Ես երբէք չեմ յայտ-  
նել քեզ, որ սիրում եմ հօրս, եղբորս, ամուսնուս,  
սիրահարներին...

**Գուրեհաս:** Եւ չեմ հասկանում, թէ՛ ինչպէս  
կարելի է նրանց սիրել:

**Լուկրեցիա:** Լինում է ուրիշ տեսակ սէր...

**Գուրեհաս:** Այո՛, սէր դէպի Աստուած, որով  
մարդս դառնում է առաքինի:

**Լուկրեցիա:** Գուրեհտտա: Մեր սարսափելի, յան-  
ցանքներով լի Իտալիայում կայ ներկայումս մա-  
քուր, ազնիւ, մեծ առաքինութիւններով լի մի սիրտ:  
Քերուվիմի սիրտը զինուորի զրահի տակ... Եթէ  
կարողանայի ես, դժբախտս, մարդկանցից արհա-  
մարհած, անարգած, անիծւած և երկնքից դատա-  
պարտուած կինս, եթէ կարողանայի ես իմ վշտալի  
գրութեան մէջ յուսալ և մտածել, որ դեռ իմ կեն-  
դանութեան ժամանակ կարող եմ յարգանք և բա-  
րեկամութեան փոքրագոյն մասը վայելել նրա  
գոռոց և անարատ սրտում, եթէ ես ունենայի մի-  
միայն մէկ յոյս, որ երբևիցէ նրա սիրտը հեշտու-  
թեամբ և ուրախ կարող է բաբախել իմ սրտի մօտ,  
այն ժամանակ դու կը հասկանայիր, Գուրեհտտա, թէ  
ինչու եմ շտապում ես հէնց այժմս իսկ փրկել իմ  
անցեալը, վերականգնեցնել խայտառակւած անունս,  
լաւնալ ինձ վրայ եղած բոլոր վէրքերը ու այդպի-

տով փարտել իմ մասին տարածւած վատ կարծիք-  
ները, որպէս զի բոլորը հաւատան, որ ես ի սրտէ  
խոստովանել եմ իմ մեղքերը:

**Գուրեհաս:** Աստուած իմ: Այնպէս խօսում էք,  
կարծէք քարոզիչ լինէք:

**Լուկրեցիա:** Մի՛ ծագրիլ: Վաղուց արդէն  
պտտում էին այս մտքերը իմ գլխում, բայց ես  
քեզ չէի յայտնում... Երբ որ մարդս յափշտակւած  
է լինում մի շարք յանցանքներով, նա դժուար կարող  
է իր կամքով դադարել: Նրա մէջ երկու սկզբունք  
են կուռում. չար և բարի: Բայց այժմս կարծում  
եմ, որ բարին յաղթող է հանդիսանում:

**Գուրեհաս:** Եւ փառք Աստուծո՛յ: Գիտէի,  
ձերդ մեծութիւն, մի քանի ժամանակ է, որ ես  
ձեզ չեմ կարողանում ճանաչել և դուք ինձ համար  
մի տեսակ հանելուկ էք դարձել: Մէկ ամիս սրանից  
առաջ, Սպօլէտտօ գնալու դիտաւորութեամբ, դուք  
արձակուրդ ինդրեցիք ձեր սիրահարւած, վաղրի  
նման նախանձոտ ամուսնուց, թողեցիք Փէրրարան  
և թագուն, կեղծ անունով եկաք Վենետիկ: Ես  
նոյնպէս հեռուեցի ձեզ, յոյց տալով ինձ մի յայտնի  
սպանացու տեղ: Այտեղ գալուց յետոյ, ձերդ մե-  
ծութիւնը հեռանում է ինձանից և հրամայում է  
չըճանաչել իրան: Յետոյ դուք յաճախում էք խըն-  
ձույքներ, տօնախմբութիւններ, նւագահանդէսներ և  
օգտուելով բարեկենդանի սովորութիւններից, ամեն  
տեղ էլ զիմակով էք երևում: Գուք ինձ թոյ-  
լատրում էք ձեզ հետ միայն երեկոները խօսել և  
այն էլ դռներից, իսկ վերջը այս բոլոր պատմու-  
թիւնը անսպասելի կերպով վճուում է այսօրւայ  
ձեր քարոզով... Խոստովանում եմ, որ քարոզը ձեր  
բերանում - մի խիտ և սարսափելի բան է երևում:  
Փոխելով ձեր անունը և շորերը, դուք այժմ փո-  
խում էք նաև ձեր հոգին: Աշմարիտն ասած՝ բարե-  
կենդանի սովորութիւններից դուրս բան է... Ես բո-  
լորովին մոլորւած եմ: Եւ ո՞վ է մեղաւոր, որ ձերդ  
մեծութիւնը այդպէս դարմանալի կերպով է վարւում:

**Լուկրեցիա** (Եսնելով նրա չեւտից եւ ձայնից):  
Տեսնում ես դու այս երիտասարդին:

**Գուրեհաս:** Առաջին անգամը չէ, որ տեսնում  
եմ և ինձ յայտնի է, որ ձեր Վենետիկ գալու օրից  
դուք դրան դադարի կերպով հետևում էիք:

**Լուկրեցիա:** Ի՞նչ կարող էք ասել սրա մասին:

**Գուրեհաս:** Ես կասեմ, որ այս երիտասարդը  
այժմ քնած է նստարանի վրայ, բայց իհարկէ նա  
կըքնէր մինչև անգամ կանգնած, թէ մի երրորդ  
անձնաւորութեան տեղ սա լսէր իմ և ձեր մէջ եղած  
հոգեկեցոյց խօսակցութիւնը:



**Լուկրեցիա:** Ի՞նչ ես կարծում, սա գեղեցիկ է:  
**Գուրեփսա:** Սա անելի գեղեցիկ է, երբ որ սրա աչքերը բաց են: Գէմքը առանց աչքերի մի և նոյն է թէ պալատը առանց լուսամուտի:

**Լուկրեցիա:** Եթէ գիտենայիր, թէ որքան սիրում եմ ես սրան:

**Գուրեփսա:** Այդ ինձ չէ վերաբերում, դա ձեր ամուսին Ալֆոնս դ'Էստէի գործն է: Բայց ես պարտականութիւն եմ համարում զգուշացնելու ձերդ մեծութեանը, որ դուք ի զուր էք ժամանակ կորցնում: Հաստատ աղբիւրներից ես գիտեմ, որ այս երիտասարդը սիրում է մի գեղեցիկ Ֆրամէտտա անունով օրիորդի:

**Լուկրեցիա:** Իսկ սիրում է արդեօք նա սրան:  
**Գուրեփսա:** Ատում են:

**Լուկրեցիա:** Աւելի լաւ: Ես անկեղծ սրտով ցանկանում եմ, որ սա բախտաւոր լինի:

**Գուրեփսա:** Այդ դարձեալ զարմանալի է, որովհետեւ բոլորովին ձեր բնա:որութեան հակառակ է: Ես կարծում էի, որ դուք կրնախանձէք:

**Լուկրեցիա.** (նայելով Ջէնարօի վրայ). Արքան ազնիւ դէմք է:

**Գուրեփսա:** Ես միշտ կարծում եմ, որ սա նման է մէկին...

**Լուկրեցիա:** Ինձ համար միևնոյն է... թող ինձ (Գուրեփսան գոռօ է: Լուկրեցիան մի քանի բողբոջներ է քսում և Ջէնարօի սառչ: Նա չէ նշարում. Էրչու ներս մտած դիմադրութեանը, որն է իրան հետեւում էն):

**Լուկրեցիա** (չնայելով նրան): Այն, սա նա է: Վերջապէս ես կարող եմ գոնէ մի բոլոր համարձակ նայել սրան: Երբէք չէի երևակայում սրան այսպէս գեղեցիկ: Տէր Ատուած, ազատիր ինձ սրա ատելութիւնից և արհամարհանքից: Սրա մէջ ամփոփւած է այն ամենը, ինչ որ սիրում եմ աշխարհիս երեսին... Ես վախենում եմ հանել դիմակը, բայց պէտք է սրբել արտասուքը: (Նա հանում է դիմակը և սրբում է արտասուքը: Երչու դիմադրութեանը խօսում էն միմեանց հետ հիասթափ, մինչև որ նա համբուրում է քսած Ջէնարօի շեւքը):

**Առաջին:** Բաւական է. ես կարող եմ վերադառնալ Ֆէրրարա: Ես եկել եմ այտեղ, որպէս զի համոզւիմ սրա անհաւատարմութեան մէջ: Այն, ինչ որ ես տեսայ, բաւական է: Այս մարդը սրա սիրահարն է: Ի՞նչպէս է սրա անունը, Բոլստիգէլլօ:

**Երկրորդ:** Սրա անունն է Ջէնարօ: Սա յապիտան է, արկածներ որոնող և յայտնի է իր քաջութիւնով: Անյայտ ծագումից մի մարդ է և ներկայումս սա ծառայում է Վենետիկի Հասարակապետութեանը:

**Առաջին:** Արն այնպէս, որ սա կարողանայ գալ Ֆէրրարա:

**Երկրորդ:** Այդ իր կարգին կըլինի, ձերդ մեծութիւն: Վաղը չէ միւս օրը սա ուղևորում է Ֆէրրարա մի քանի երիտասարդների հետ, որոնք Տիօպոլօ և Գրիմանի թիկնապահներն են:

**Առաջին:** Լաւ: Այժմ կարող ենք վերադառնալ: (Գոռօ էն):

**Լուկրեցիա** (նայելով շեւքերը և գրչու ձեռքերը): Ո՛հ Ատուած: Արժանացրու սրան կեանքի մէջ նոյնքան ուրախութեանց, որքան ես վիշտ և դժբախտութիւն եմ կրել: (Համբուրում է Ջէնարօի գլուխը, որը վախեցած արնանոս է):

**Ջէնարօ** (բանելով յուզած Լուկրեցիայի շեւքը): Համբո՛ւր... կի՛ն... երգում եմ պատուով, որ չեմ ճանաչում ձեզ...

**Լուկրեցիա:** Թողէք ինձ:

**Ջէնարօ:** Ինչո՞ւ:

**Լուկրեցիա:** Մարդիկ գալիս: (Սուրճ է իր շեւքը նրանից և փախչում: Ջէնարօն հեռուում է նրան):

(Կրօնաբանակի)

Ա Ռ Ո Ղ Ջ Ռ Պ Ն Ն Ն Ն

II Ե Ր Կ Ո Ւ Ն Բ

Երկունքի սկիզբը.—Սաղմնաբոյնի կարեւորութիւնը.—Երկունքի ծնւիլը.—Ընկերքը:

Երկունք կոչւում են այն ցաւերը, որ գրում է կինը չլուծեան վերջին օրերում, ճնելիս: Այդ ցաւերն յատնւում են կանոնաւոր կերպով ընդհատուելով և զոջանում են արգանդի կծկելուց, կանոնաւոր և որոշ ժամանակից չետոյ: Արգանդն այսպէս կծկելով արտաբոսում է երեխային իր միջից դէպի լոյս աշխարհ: Երկունքի ցաւերն առաջ զգացւում են մէջքում և չետոյ տարածւում են ներքնորովանում կամ, ինչպէս ասում են «փոքր փորում» և ազգրում: Զօրեզ երկունքի ժամանակ փորը շատ է կոշտանում: Այդ կոշտութեան աստիճանին համաձայն, իսկական երկունքը զանազանում են այն ցաւերից, որոնք առաջանում են աղիքների փքելուց և այն: Երբեմն իսկական երկունքն յատնւում է, երբ չլուծեան ժամանակը դեռ չէ վերջացել:

Արգանդը կծկելով հրում է սաղմնաբոյնը երեխայի հետ առաջ, բշտիկն աւելի ու աւելի է սեղմւում արգանդի վզին, լայնացնում է նրան և վայր է իջեցնում. ճնունդի ժամանակ սաղմնաբոյնը շատ է օգնում: Առանց նրան կրօնեղմէր արգանդն իր կծկումներով երեխային, իսկ ջրով լցւած լինելով, այդ բանը չի լինում, բացի դրանից սաղմնաբոյնը լայնացնում է արգանդի վիզը, կանոնաւոր, որովհետեւ ինքն էլ հաւասար է ու հարթ: Երբոր արգանդի վիզը լայնանում է քիչ քիչ ու հետզհետէ, այդ բան վնաս չի տալ արգանդին: Առանց սաղմնաբոյնի թէ արգանդը և թէ պարանոցը կըճաքէին ու մինչև իսկ կըպատուէին



ինչպէս այդ պատահում է զօրեղ երկունքի ժամանակ: Սողմնաբոյնը քանի դեռ ամբողջ է, պահպանում է երեխայի ձեռքերն ու ոտքերը դէպի փորի կողմը և չի թողնել յետ շրջինն ու դուրս ընկնեն առաջնամուտքից ժամանակից առաջ: Նոյն կերպով սողմնաբոյնն արգելում է երեխայի գլուխը յետ դառնալուն, ուստի և նա ցած է իջնում ճոճրակով: Եթէ դուրս է ընկնում ձեռքը, կամ գլուխը յետ շրջելուց երեխան գալիս է դէմքի կողմից կամ կզակը ցցած, այն ժամանակ երկունքը լինում է ցաւաբեր, որի համար էլ առանց բժշկի օգնութեան չի վերջանալ:

Սրանից կարելի է հասկանալ, թէ սողմնաբոյնը (զլխաբուշտը) որքան կարևոր է երկունքի ժամանակ, քայց դայեակները տգիտաբար պատում են այն ժամանակից առաջ, չըհասկանալով բնութեան խելացի կարգադրութիւնը: Բնութիւնը պահպանում է հասակն առած մարդուն էլ, նորածնին էլ ամեն մի վնասից, բայց մարդիկ իրանք են խանգարում նրա կարգերը և ապա տրտնջում իրանց բախտի դէմ, թէ Աստուած այսպէս էր կամեցեր:

Երբ սողմնաբոյնը ձգում ընդլայնում է արգանդի վիզն այնքան, որ երեխան առանց իրան էլ հեշտութեամբ լոյս աշխարհ կրգայ, այնուհետև բշտիկն ինքն իրան կը պատրաստուի, և ջուրը դուրս կըթափուի: Այդ դէպքում երեխայի գլուխը ամրանում է արգանդի վիզին, ձեռքն ու ոտքն էլ չեն կարող դուրս ընկնել: գլուխը յետոյ աւելի ու աւելի ցած է իջնում, կծկումները դառնում են աւելի զօրեղ և ցաւաբեր, վերջապէս գլուխը, ճոճրակը դէպի առաջ դուրս է գալիս, իսկ նրանից յետոյ երեխայի բոլոր մարմինը:

Այսպիսի երկունքը համարում է կանոնաւոր: Երբեմն, շատ քիչ դէպքում, պատահում է և այնպէս, որ երեխան իջնում է յետոյքը դէպ առաջ ուղղած, բայց ոչ գլխով: Այս երկունքն էլ կանոնաւոր է համարում, և եթէ մնացած մասերն էլ լաւ կրգան, այն ժամանակ այս տեսակ երկունքը չի վնասիլ թէ ծննդկանին և թէ

նորածնին: Այսպիսի ծնունդի ժամանակ աւելի ևս պէտք է պահպանել սողմնաբոյնը, որպէս զի ժամանակից առաջ չըպատառել: Աստուած չանէ, որ մէկը կամենայ բշտիկը պատառել: Այն ժամանակ արգանդը խիստ կըսեղմի երեխային և որովհետև երեխան գալիս է յետոյքով, այն ժամանակ նրա փորը պորտի հետ միասին շատ երկար կը մնայ մուտքի մէջ: Սրանից կըծնուի պորտը, արիւնը նրա միջով չի հոսիլ, ուստի և երեխան կամ կըմեռնի, կամ մեռած կըծնուի: Այսպիսի երկունքի ժամանակ, եթէ կարելի է գտնել, պէտք է կանչել մանկաբարձուհուն:

Ընկերքը (ДѢТКОЕ МѢСТО) դուրս է գալիս կամ իսկոյն, կամ երեխայի լոյս աշխարհ գալուց մի քիչ յետոյ: Վերևում արդէն ասեց, որ ընկերքն աճում է արգանդում առանձին շառաւիղներով: Այդ շառաւիղները չլուծեան վերջերում սաստիկ բարակում են և հեշտութեամբ կարող են կտրուել: Արգանդի կծկումների ժամանակ, երբ նա կուչ է գալիս, ընկերքը քիչ-քիչ բաժանում է նրանից, շառաւիղները կտրատում են և նա դուրս է գալիս: Պատահում է երբեմն, որ ընկերք շատ պինդ աճած է լինում արգանդուս և չի կարող մեռակ դուրս գալ: Եթէ ծնունդից երկու ժամ յետոյ ընկերքը դուրս չըգայ, պէտք է հրաւիրել բժշկին, որ նա օգնէ ընկերքը դուրս գալուն: Երբեմն նա հանում է, ընկերքը ձեռքով, այսպէս նա կարող է փտել և ապականել ծննդկանի բոլոր արիւնը, սրանից կարող է առաջանալ ծննդատենդ, որից շատ անգամ մեռնում են կանայք: Այսպիսի խիստ ամբուլթիւնը համարում է անկանոն: Այս ամբուլթիւնը լինում է այն կանանց, որոնք ժամանակից վաղ են ծնում և այդ դէպքում պէտք է սպասել նրան ձեռքով: Ընկերքը այսպիսի դէպքերում պնդացած է լինում նրա համար, որ դեռ երկար միջոց, մինչև չլուծեան վերջը, պէտք է կերակրէ մանուկին, որի համար շառաւիղներն ամուր են, դրա համար էլ հեշտութեամբ չի դուրս գալ:

(Կրօւարունակի)



Փ է Լ Ի Ե Տ Ո Ն

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ «ՄԱԶՆԻՍ»

Նուէր իմ ըստրեկամ Դ. Աղայեանցին

Այլ քան երազ, որ մենք հայերս  
Ընդունակ ենք տեսնելու,  
Պարզ է, որ շատ սագում էր մեզ  
Լաւ երազգիրք կաղմելու:

Ե՛րբ քերից՝ միշտ հայ ազգը  
Երազգիրքն է շատ յարգում,

Ինչպէս կազմող տէր-հօր ազգը  
Յոյց է տալիս Մրշակում:

Տէր-հայրն այնտեղ առում է, որ  
Էլ չըթողին երազգիրք.  
Ամեն կողմից ուղարկում են  
Չատ նամակներ ու ինդիքք...

Երազգիրքն է, ասում է նա,  
Հայի ոսկի ընկերք...



Եւ սրանում կանխած չըկայ—  
Փայտ է ասում տէրտէրը:

Երազգիւրքը չի կարելի:  
Տալ ապառիկ ոչ մի հատ...  
(Ի՞նչ ապառիկ, երբ մի բանի  
Մուշտարի կայ այսքան շատ):

Իէհ, իմ անգին Ասլուն-ուպէր,  
Արի թողնենք ամեն ձիւրք.  
Էլ չըզբենք երկ ու վէպեր,  
Չինենք մի լաւ հրազգիւրք:

Ա՛խ, հիթէ մենք զէթ մի մի հատ  
Երազգիւրք յօրինենք,  
Այնուհետեւ զըջով ապրող  
Կարգին զրող կըլինենք:

Էլ չենք ծախել մեր գրքերը  
Ութսունուհինգ տոկոսով,  
Կոպէկ կոպէկ առնել փողը.  
Այն էլ կանխիկ միայն կիսով:

Տէր-հօր նման քսան տողից  
Երկար մի ազդ կըզբենք,  
Մինչև նոր տիպն ընթերցողից  
Համբերութիւն կըլինուրենք...

Եւ մեր գործից երբ կըստանանք  
Այսպէս առատ վարձ ու փող,  
Նոր կըտպենք աւելի թանգ,  
Եւ աւելի մեծ ու ճոխ:

Իսկ երբ տանենք զրախանութ  
Էլ չենք կանգնել լուռ ու խեղճ.  
— Հայի ոսկի ընկերն է սա.  
Ոչ սպառաւիկ եւ ոչ զեղջ...

Ապրիս, տէր-հայր, ի՞նչ լաւ գիտես  
Մեր հայ ազգի ճաշակը.  
Թէ չէ մենակ պարծենալով  
Չաշխ տարաւ Մըշակը:

Յովհաննէս Թումանեանց

ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՁՐՈՅՏՆԵՐ

II

Աշխատութեան նպատակը

Բնութեան մէջ կայ ամեն բան, ինչ որ բնական մարդուն, ինչպէս և անասունին հարկաւոր է, բոյս, ջուր, օդ, տաքութիւն, տեսարաններ, ծաղիկներ, ձայներ, (վերջին երեքը մանաւանդ մարդու հոգեկան կեանքի համար): Բայց մարդը բնութեան տէրը դառնալու համար, չէ բաւականանում նրա անմիջական պարգևներով այլ բնական նիւթերը և երևույթները ձևակերպում է իր կամքին, ճաշակին, սրտի ուզածին համեմատ: Բնութիւնը տալիս է մարդուն հում նիւթեր. պտուղ, միրգ, վուշ, բամբակ, փայտ... որոնցից արդէն մարդը ինքը պատրաստում է կերակուր, հագուստ, բնակարան... Բնութիւնը տալիս է մարդուն մետաղ, ներկ, մարմարիօն, իսկ մարդը ինքն է պատրաստում նրանցից դաշնամուր, նկարներ և արձաններ: Առանց բնութեան պարգևների, մարդը ոչինչ չէ կարող ստեղծել իր բարօրութեան համար: Բայց միւս կողմից չըկան բնութեան մէջ քաղաքակիրթ մարդուն հարկաւոր առարկաները, պիտոյքները:

Բնութեան մէջ չըկայ գրիչ, թուղթ, դանակ, աթոռ, գլխարկ, բաց կան նիւթեր, որոնցից կարելի է պատրաստել չիշեալ առարկաները: Վերջիններս ուրեմն ոչ թէ բնական պարգև են, այլ մարդու արդիւնագործած բարիք են: Մարդկային աշխատութեան նպատակն է և պիտի լինի՝ ըստ կարելոյն շատ և ըստ կարելոյն աւելի նշանակութիւն ունեցող բարիք ստեղծել:

III

Բ ա Ր Ի Բ

Բարիքը լինում է երկու տեսակի, նիւթափան և գաղափարական: Բնական բանը, թուղթը, կարասիքը նիւթական բարիքներ են: Իսկ երգը, թատերգութիւնը, մի ծրագիրը, մի նոր կրօնը կամ փիլիսոփայական համակարգութիւնը, որոնց առաջ բերելու համար նոյնպէս աշխատութիւն է գործ դրում, գաղափարական բարիքներ են: Երկու տեսակի բարիքներն էլ ծառայում են մարդու կարիքներին: Ուրիշ խնդիր է, թէ որքան լաւ են ծառայում:

Բարիքի երկու տեսակներին համապատասխանում են աշխատանքի երկու տեսակները, ֆիզիկականը և հոգեկանը: Հոգ փորողը, կաշի քեր-

թողը, ծառը կտրողը, քար տաշողը՝ ֆիզիկական աշխատանք են կատարում, որովհետեւ գործ են դնում իրանց կոները, ոտները, մէջքը: Մրգավաճառը, որ գլխին դրած տանում է մրգով լիքը փսէն, նոյնպէս ֆիզիկական աշխատանք է գործ դնում, թէև գլուխն է բանեցնում: Իսկ ուսուցիչը, գրողը, բարոյգիչը, երգիչը, երաժիշտը, դատաւորը հոգեկան աշխատանք են գործ դնում (մտաւոր, գեղարւեստական և այլն):

Երկու տեսակի աշխատութիւնն էլ օգտակար են, արդիւնաւէտ են, հարկաւոր են մարդկային կեանքի համար, եթէ միայն պիտակցական են, խելացի են: Հակառակ դէպքում, ի հարկէ, երկուսն էլ վնասակար են: Անճաշակ բանաստեղծութիւնը վնասակար է, առեւազն անօգուտ է, Բայց վնասակար անօգուտ է և այն մարդու աշխատանքը, որը խալ պտուղներ է քաղում անտառից և վաճառում երկխաներին:

Անցեալ դարում տնտեսագէտները մոլորութեանց մէջ ընկնելով, սկսեցին քարոզել, թէ հոգեկան աշխատանքը ապարդիւն է, իսկ միայն ֆիզիկական աշխատանքն է արդիւնաւէտ: Սրանց









Հ ու ն ձ . ա ռ խ ա ռ ս ա ն լ է Ր գ ե ղ զ կ ու ճ ի ն ե Ր .



Դուռը բացեց վերակացուն. նրա ետև կանգնած էր մի երիտասարդ գեղեցկուհի:

— Զեզ հետ խորհուրդ ունի այս տիկինը, ասաց վերակացուն և հեռացաւ:

Տիկին Մուղայթը սենեակս չըմտաւ, այ հրաւիրեց ինձ դաւթում մի քիչ խօսել: Այս գեղեցկուհին մօտ քսան-ևհինգ տարեկան մի թրքուհի է, երեսը մի փոքր գունատ: Սրա հրալից սևօրակ աչքերը, կամարակապ թանձր յօնքերը, նագուկ քիթը, փոքրիկ բերանը բոլորակ երեսի վրայ դասաորած են սքանչելի ներդաշնակութեամբ: Այքս չեմ կարողանում սրանից հեռացնել, հէնց առաջին հայեացքից հմայուել եմ: Գաւթի պատուհանում նստել ենք երեսներս դէպի դարբանոցը. մի մաղաչափ ազատ տարածութիւն է խոչընդոտն Մուղայթի կուրծքը իմ կուրծքի դիպչելու:

— Այստեղ ձեր մասին շատ բաներ են պատմում, ճիշտ է: Մի քանի յուպէ լուռ մնալուց յետոյ խօսեց տիկին Մուղայթը:

— Զրգիտեմ ինչ են խօսում:

— Ասում են, որ դուք կարող էք ամենամեծ դատախազին էլ կանչել այստեղ և առգդ (խնդիր) անել:

— Իրաբանչիւր բանտարկեալ իրաւունք ունի հարկ եղած ժամանակ դատախազին հրաւիրելու այստեղ:

— Առանց կանչելու էլ շաբաթը, երկուշաբաթը մէկ անգամ կրտսեր դատախազը գալիս է: Բայց իմ առգդ ուրիշ է:

Եւ տիկին Մուղայթը սկսեց պատմել իր գլխով անցածը: Ես գունատուել էի, մի տեսակ սարսուռ պատել էր ինձ: Որքան շատ էր խօսում այդ կինը, այնքան աւելի էի ես փոքրանում, կուչ գալիս: Սրա միմիկը, պերճ լեզուն, ազատ նայածքը, քնքոյշ շարժողութիւնները չիշեցնում էին առաջնակարգ դերասանուհիների: Ես այլևս սրան չէի լսում, մտածում էի ինձ ու ինձ: Ինչ կըլինէր այս կինը բեմի վրայ: Ո՞ր դրամատիկ դերասանուհին կարող կըլինի սրա հետ մրցել: Այդքան զգացմունք, այդ աստիճան սիրող և տանջած սիրտ մի կնոջ մէջ առաջին անգամն էի տեսնում:

Չորս տղամարդ է սպանել այդ քսանևչորս տարեկան կինը, վերջինին բացի գնդակահար անելուց, դաշոյնով

էլ քսան կտոր է արել դիակը: Գատարանը երեք անգամ արդարացրել է այս ըստամենայնի հերոսուհուն, իսկ չորրորդ անգամ վճռել է տաժանակիր աշխատանքներին: Իր պատմելով Մուղայթը նահանգի հիւրումալագն է եղել: Ամուսինը մի կտրիճ, բոյբուսաբով գեղեցիկ, ոչ միայն դաւաճանել է իրան, այլև միանալով աւագակների խմբին՝ կնոջն էլ ստիպելիս է եղել, որ ընկնի տիղմի մէջ... Սիրող կինը երկար մաքառել է իր մարդու ընկերների դէմ, բայց ամուսնուն չի կարողացել ճանապարհի բերել և հա սկսել է հրացանի գնդակին ապա ինձ պաշտպանել իր պատիւը, ու սրա համար ընկել է տաժանակիր աշխատանքների ուղին: Այս կնոջ պատմութիւնը մի սրտատրոփ բոժան է, որ գուցէ մի ուրիշ անգամ աւելի մանրամասն քեզ գրեն: Մուղայթը մի փոքր հագում է: Այդ հագը սկսել է այն օրից, երբ նրա ծնի երեսնան, որ կարծեմ հէնց բանտումն է եղել ծնած, երեք տարեկան դառնալուց խլել են մօր կրծքից և ուղարկել են հօրը: Մուղայթը երեխի անունը տալիս առւի պէս արտասուք է թափում:

— Յա դաքե, սկսեցին կանչել սպասաւորները: Մուղայթը վերկացաւ տեղից, ձեռս շատ մտերմաբար սեղմեց և կամենում էր գնալ:

— Համեցէք իմ սենեակը, միասին չսչ խմենք:

— Տիւանդ ընկեր ունեմ, անկողնից չի կարող բարձրանալ, նրան ես սլէտք է չայ խմեցնեմ:

— Թշաւուրութեան մէջ մարդ մտանում է իր իսկական վշտի ծանրութիւնը, երբ նա նեցուկ է հանդիսանում իր նման մի ուրիշ դժբախտի:

— Թոյլ տւէք, խնդրեմ, ուղարկել ձեզ մի քիչ ժոռնի (քաղցրեղէն) և այս երեկոյ իմ հիւրս եղէք դուք և ձեր հիւանդ ընկերուհին: Կրկին սեղմելով գեղեցկուհու ձեռները, սանդուղքներից նրան ճանապարհ գրցեցի:

— Ես դարձեալ կըզամ ձեզ հետ խօսելու, դարդախալ (ցաւերս չաչտնելու) լինելու:

— Համեցէք, երբ կամենաք:

Վերագարձայ խուցս. մատուցարանի մէջ սարքեցի միրգ, քաղցրեղէն, թըլուածք, չայ, շաքար, ծխախոտ, մի թոփ ասեղ, երկու մատոկ սև և սպիտակ

թել, մի սրակ օղբիլոն ու մի արծաթ մանէթ և սրանց վրայ էլ սըփուելով ճաղիկներ ուղարկեցի հերոսուհուս:

Խոնջան տարաւ սպասաւորս, բայց մինչև նրա վերագարձը՝ սենեակս մըտաւ դագախեցի ճափարը և ձունկ չոքելով առաջս, սկսեց հեկեկալ:

— Վեր կաց, ինչու ես լաց լինում, ինչ ես կամենում:

— Աստուած է քեզ ուղարկել... Եւ նա չըկարողացաւ խօսքը շարունակել: Ըղթաների ձայնը այդ տաժանակիր մարդաստանի ճնկներից դողանջում էին և կարծես ասում. սա չանցանք չունի, սա անմեղ է...

Բայրամս

Յագւրի Տիպերից

I

Նաւթային աշխարհի հրապուրիչ մըթնությունում, մի փոքրիկ պտոյտ կատարելուց, մենք կըտեսնենք որ թէ Բագուում, թէ Սև Քաղաքում և թէ Բայրամնիում վերջին տարիները, հարիւրաւոր ուսուցիչներ գործարանական և առևտրական աստարիզում, այս կամ այն պաշտօններն են վարում: Այդ բանն ըստ երևոյթի ինչ օգտակար է, որովհետև դրանք մեր հասարակական կեանքում որոշ դեր կըկատարեն: Մեր պանդուխտ բանւորներին և տղէտ գործակատարների համար օգտակար առաջնորդներ կըլինեն, բարոյապէս ազդելով նրանց մտքի և աշխարհահայեցողութեան վրայ: Բայց ոչ, իրականութիւնը չէ արդարացնում մեր սպասածը:

Մի ժամանակաչ կրթական ասպարիզի սիւներ ներկայացնող, մանկավարժական քաղցր և հրապուրիչ ասպարիզում երկար տարիներ գործող պարոնները, այսօր հասարակ, տղէտ գործակատարից ոչինչով չեն տարբերւում, ոչ ձգտումներով և ոչ էլ իղէալներով: Նոյն իսկ յաճախ տղէտ գործակատարը, աւելի միտիթարական պատկեր է ներկայացնում, քան նախկին ուսուցիչը:

Ո՞րքան տխրալի երևոյթ:

II

Ահա մի առաջադէմ գաղափարներ դաւանող ուսուցիչ, մի անձնաւորութիւն, որի համար մի ժամանակ նշանակութիւն չէ ունեցել անձնական կարիքը և դժբախտութիւնը: Բայց



անողութիւն և Ապշերօնեան մթնոլորտը. նա ոչնչացնում է այն, ինչ որ վտեմ է և ազնիւ: Այժմ դադափարի երգւեակ երկրպագուն փոխել է, նրա իդէալը «չաղ պաշտօնն է», ապա եթէ քիչ հեռուն գնանք—մութ անկիւնների հրապուրանքն է:

Ահա ձեզ երկրորդը՝ համալսարանաւարտ. նրա մտքով չէ անցնում, թէ ինչ է կատարում չորս բոլորքը—կեանքում. նա մի հեղինական ժպիտ երեսին, հրապուրում է միմիայն զեղեցիկ սեռի փսփուկ բալու կներով: Նրան թւում է թէ մթնոլորտը մատնած է անշարժութեան:

Ահա ձեզ երրորդը, նախկին ուսուցիչ, որ իր բազմակողմանի զարգացմամբ և լեզուի գեղեցիկ առողանութեամբ, ճոճաւն ֆրանսերի հմայիչ ներդաշնակութեամբ անշուշտ կը հրապուրի, կ'ողբորի լսողին: Բայց լսկական գործի ասպարիզում նա համբանում է, նրա լեզուն պապանձում է, որովհետեւ իր նեղ շահերին ձեռնուտու չէ:

Ահա և չորրորդ լսորհրդաւոր անձնաւորութիւնը, որի խելացի հայեացքը արտայայտում է աւերակների բեկորների տակ խեղդած հոգու մաքրութիւն և վսեմութիւն: Նրա զգոյշ քայլերից կարելի է եզրակացնել, թէ պարոնի ամեն մի ժամը հաշւած է: Պատմում են թէ ուսուցչական ասպարիզում, նա իր շրջապատող սանիկների պաշտելին և սիրելին է եղել: Իսկ այսօր նրան թղթախաղի կանաչ սեղանի շուրջը նախադահ են ընտրում և նա խաղի մէջ դիսցիպլինա է մտցնում...

Ահա ձեզ հինգերորդը, որ սիրահար է գեղեցիկ ծրագիրներ կազմելու, մէկը միւսից նպատակաշարժար. և եթէ այդ ծրագրերի զէթ մի մասը իրապոք չէր, անշուշտ պատմութիւնը նրա ճակատին կը դրոշմէր թեփորմտորի անունը: Սակայն ահա նա պաշտօնի է մտնում և ամեն բան իսկոյն փոխում է, նա այժմ հլու հպտակ է հաստազուխ խաղեցիկն. գաղափարի վաղեմի գինակիրը, քծնում է նրա ամեն մի քմահաճութեան առաջ, միայն թէ լաւ վարձատրելի: Զգուելին այն է, որ նա ամենայն սահնարտութեամբ խոստովանում է թէ ինքը չէ իմացել կեանքի գաղտնիքը և իզուր երկար ու

ձիգ տարիներ վատնել է ուսուցչական ասպարիզում:

Ահա և վեցերորդը: Մի պարոն, որ ունեցել է փառաւոր անցեալ, եղել է մի ժամանակ և բանաստեղծ, և վիպագրող, և հրապարակախօս, և կրիտիկոս, և մանկավարժ, և պատմաբան: Իսկ այժմ... տաղանդը հարկաւոր է նրան, որ բազմատեսակ և ալլասեւած մարդկանց առաջ կարողանայ ճարպիկութեամբ քծնել, ստորանալ, եթէ մի դռնից գուրս են անում, միւս դռնից ներս սողալ:

Ահա և եօթերորդը. շատ զեղեցիկ և անզուգական իր ստանձնած պաշտօնում: Միւս կողմից գիշերային չլիկներին, զանազան ընկերութիւններին «պատեհեմութեամբ» քաւաղաւ, որն այժմ ամուսինը երեսի վրայ թողած գիւղում, ինքը վազելում է նախապէս աշխարհի հազար ու մի «բարիքներ»:

Վերջապէս ահա և ութերորդը, որի համար ցերեկը խաւար է և մուսկկարծես արևի լուսապայծառ ճառագայթները զարթեցնում են նրա մեռած հոգու մէջ անցեալի փառաւոր յիշատակները: Սակայն ահա վրայ է հասնում գիշերը և խաւարը տիրում է ամենուրեք ու նրա հոգին հրապուրում, հանգիստ է գտնում զանազան աթեանական երեկոներում:

Լ. ՏԵՐԵՈՒՄ:

Ք Ա Ն Ա Ղ Ա Տ Ա Կ Ա Ն

Պրակաւուրիւն եւ մասնուր

Խիստ ուրախայի է այն հանգամանքը, որ մեր ժամանակակից գրականութիւնը մի առանձին եռանդով ձգտում է մատչելի դարձնել ամբողջ ժողովրդի համար մտքի լոյսը, ժողովրդականացնել ամբողջ կեանքը:

Սեր ասածից դուրս է գալիս—ուսում է Բագուազէպ ամսագիրը—որ ուսուցանող գրականութիւնը ընդհանրապէս անմատչելի է ժողովրդի ստորին և նոյն իսկ միջին դասակարգին՝ իր երոպական բուռերի չափազանցած փոխառութեան երևոյթով... Սա մի անձնական լնդիր չէ, որի մէջ կամակորութիւնը կարողանայ տեղ բռնել, սա հասարակական ընդհանուր հոգ է, որ վերջապէս լուրջ ուշադրութեան արժան է եմթարկել և ժողովրդեան ձեռքը տալ նրան հասկանալի մի գրականութիւն, որպէս զի կարողանայ իր դերը կատարել: Զարմանալի է որ Մշակի պէս լրագիրը ոչ թէ միջն շրջանի չէ իրագործել ընդհանրութեան այս ար-

դարացի ցանկութիւնը, այլ նախնական մանրէքնէքն Էստրեանը, Բախնի և արամենից աս է զործածում երաւսական բառեր նախ իսկ ամենապարզ ճիշտագրութիւնների կամ բացատրութիւնների մատնակով:

Միանդամայն համաձայն ենք Բագուազէպի հետ:

Բայց գրականութիւնը իր արժանալայելի դիրքի մէջ դնելու համար բաւական չէ լեզուն մատչելի դարձնել, որովհետեւ մատչելի լեզուով է կարելի է վազրիվերոյ կրթութիւն տալ ժողովրդին: Լեզուն մատչելի դարձնելուց աւելի կարևոր է մարքի գրականութիւնը պիտոյր և մուրք գրականութիւնը պիտոյր: «Գաղափարներից», որոնցով լիքն է մեր գրականութիւնը: Բագուազէպը լաւ դաս է տալիս Մշակին, բայց աւելի էլ լաւ դաս է տալիս Մշակը մեր Միթիթարեան հայրերին, ուրեմն և Բագուազէպին:

«Լաւն պապը—ստում է Մշակը— նախկին աշխարհական իշխանութիւնը վերականգնելու համար սկսեց մի քաղաքականութիւն, որ աճազին ոյժ տեց Հոռոմի աթոռին: Երապայի բոլոր երկրներում նա կազմակերպեց կաթոլիկ կուսակցութիւններ (իսկ Ասիայում, իսկ Հայաստանում), որոնք պործում են նաև սառ իրախանգներով (Հակոբ Ամսորեայի պէր լոյս) և աջակցում են Արոտի շարեկամ կառավարութիւններին (ինչպէս և թիւրքիւնում, այնպէս չէ): Հիմնելով պատմութեան, մարդկային առաջադիմութեան տարրական սկզբունքների վրայ, մենք չենք տատանում առելու, որ կաթոլիկ եկեղեցու աշխարհական տիրապետութիւնը կը լինի մի խոշոր շեղումներում նշան: Ս. Պետրոսի աթոռի ձգտումները պէտք է համարել ցնորք: Այնքան առաջ դնացած մարդկութեան համար վնասակար, կասարելապէս աւելորդ պիտի լինի կարդիկ կրիտի ինստիտուտները, այն կղերի, որ չէ կարող երբ մէկը հրահարել իր դարձուր նախապաշարունակներից»:

Մշակի այդ լսութեքը, որոնց տակ մենք ստորագրում ենք երկու ձեռքով, թող լաւ պահեն միտքներում Բագուազէպի եւ Հանդես Ամսորեայի ղեկավարները:

Սակայն բաւական չէ, որ գրականութիւնը թէ լեզուի և թէ մտքի կողմից մատչելի լինի ժողովրդին: Տնտեսական ծանր կեանքը այնպէս ճնշում է շատորին, որ խեղձերը քիթ սրբելու ժամանակ չեն դիտնում, ուր մնաց, որ պարտաւէլին գեղարեւեստով կամ գրականութեամբ:



«Այս գործում—ասում է նոր-Գար-կարող էին իբրև օգնուէտ գործուն, միջամտի հոգևորականները, եթէ դրանք հասկանում լինին իրանց կոչումը (երեւելիս) ժամանակ է, որ փոքրատերերը, գործարանատերերը հասկանան, որ մարդիկ չամենայն դեպս մեքենայ չեն, որ գործակատարները, որ բանւորները, որ աշխատաւոր ձեռքերն էլ միջ և արվածից են, նրանք էլ սիրտ ունին, հոգի ունին, բնամտիք ունին, պէտք է որ նրանք էլ բացի միտք դրժից, մի փոքր էլ, գոնէ շաբաթուայ մէջ մի օր, իրանց մասին և իբրայինները մասին հոգան և նրանց հետ անցկացնեն օրը»:

Այն, որ քան անհատներ կան ժողովրդի մէջ, որ լուսոյ, ճշմարտութեան համար ծարաւ են, և ինչպէս ծարաւ, ոչ թէ այնպէս անտարբեր, որպէս շատ անգամ լինում են բարձրագոյն զբոսնորդ ի գուր ոտնակոխ անող մեծամիտ սպաերը...

«Ով յայտել է գաւառում—ասում է Հեղինա շարքարերը—շատ լաւ գիտէ, թէ որպիսի մեծ դեր են խաղում քաղաքակրթական կեանքի մէջ այդ կիսակիրքները, կամ աւելի լաւ է ասել ինքնակիրքները: Գոթ կրհանգիւյթ նրանց ամեն տեղում, ամեն քայլում: Սա գաւառական հասարակութեան ամենակենդանի տարրն է: Եթէ դուք կամենում էք տեսնել մարդկանց, որ հետաքրքրուում են ժամանակակից գրականութեամբ, որ դիտում են յառաջընթացութիւնը, որ շարունակ լրացնում են իրանց ուսումը, ապա կրթութեք նրանց միայն քիչ դէպքերում դիպումաւորներ ունէք, որ մեծ մասմբ հանգստանում են այդ դիպումների վրայ և աւելի հեռուն գնալ չեն կամենում: Իսկ սովորաբար այդպիսի ճշմարտութիւն որոնողները լինում են նրանք, որ Կամաւոր կերպով հեռացել են մեր գաղութներից, կամ դուրս են քշուել նրանցից կանազան պատճառներով: Նոյնպէս որ հասարակական գործն էլ վերցնէք, ամենուրեք, ուր հարկաւորուում է անշահատէր աշխատանք, ուր մարդիկ գործում են ոչ ուձկի կամ աստիճանի համար, դուք կրթութեք նոյն ինքնակիրքներին»:

Այսպէս է դուր ժողովրդի մէջ արդե՞ք ինչպէս է հայերիս մէջ: Մեզանում, պէտք է դառն սրտով խոստովանել, թոյլ է դիպումաւորը, բայց թոյլ է և անդիպումը, և կիսակիրթը և անկիրթը... Մեզ անհրաժեշտ է կատարեալ բարոյական վերածնութիւն...»

Իւանովնան վարժուէութիւն է անում և շնորհակալ են նրանից: Բայց ահա նա երազում տեսնում է, որ իրան դաւի են ենթարկել, որովհետեւ նա մանկավարժութեան դէմ մեղանչել է... Նա իր սրտշտօնը «լաւ» է վարել, միայն թէ չէ սովորեցրել «քննադատաբար մտածել»... միևնույնն է, թէ ոչինչ չէ սովորեցրել: Երանի թէ այդպիսի դատի ենթարկէին բոլոր մանկական դաստիարակներին, ժողովրդի կրթիչներին, հասարակութեան ղեկավարներին: Այն ժամանակ շատ վշտեր կարող էին անմեղ յայտնել. 5 կուպէկանոց գրքոյլը շատ գորեղ սկզբունք է բարոյում:

2. Մեղուներ, կոզմեցին 2 էլլինկարեան և Ռաշմաձեան, Ալէքսանդրապոլ, 1898 թ. դինը 10 կոպ.:

Այս երկու պարունները միասին աշխատելով կազմում և հրատարակում են բնագիտական մատչելի գրքոյկներ, ներկայ գրքոյլը երրորդն է արդէն:

Գրքոյկի մէջ մատչելի ոճով խօսուում է մեղուների կազմաձքի, յատկութիւնների, կեանքի և օդտակարութեան մասին: Խիստ հետաքրքրութեամբ է կարգացում և հասկանալի է թէ մեծերի և թէ փոքրերի համար: Յիշեալ երկուստարդների ձգտումը և եռանդը արժանի է քաջակերութեան: Գրքոյկի երեսի յայտարարութեան նայելով՝ շուտով պիտի լոյս տեսնեն դարձեալ երկու գրքոյկներ. 1) Մազնիսականութիւն. 2) Ուժեր և էլէքտրակաւութիւն:

3. Ջոն Սթուարտ Միլլ. «Ազատութեան մասին»: Ռուսերէնից թարգմանեց Ա. Կ.: Միլլի համառօտ կենսագրութիւնով, միջադիր 275 երես. դինը 1 ռուբ. 20 կոպ. Մոսկու:

4. Հայնե. «Բանաստեղծութիւններ եւ բերւածներ», թարգմանեց Ֆրանսերէնից Ատոմ Զահէն: (Արտատպւած «Մուրն» ամսագրից). 1898 թիֆլիս գին 40 կոպ.:

Վերջին երկու գրքերի մասին մատենախօսութիւն կրլինի «Տարազի» էջերում:

«Մուրնի» վերջին Ձեռն կարգում ենք հետեւեալ ուշադրութեան արժանի նկատողութիւնը. «Մի քանի ամիս առաջ, երբ իմացեց որ պ. Աւետ. Պօղոսեան նւիրել է 10,000 ռ. Հայոց հրատ. Ընկերութեան՝ ման-

կական և ժողովրդական գրքեր: հրատարակելու համար, ամբողջ հասարակութիւնը միաբերան շնորհաւորեց հրատարակչական գործին նպաստող այդ իր տեսակույ անյարանիկ նւէրը: Ապա գտնեց նաև պ. Պօղոսեանի օրինակին հետևող—պ. Խանգեայրի Բագայեան (Ռոստոլում), որ նւիրում էր 5,000 ռուբլի նոյն նպատակով: Բայց անխտոր չեղաւ ամենքի ուրախութիւնը այդ նոր կարգի նւէրների համար: Մշակի խմբագրութիւնը գրաւաւ, որ ինչ որ լաւ բաներ են կատարում առանց իրան հարցնելու, առանց որ իրան խորհրդի դիմելու հարկ գգան: Եւ ահա նա, այդ թերթի խմբագրութիւնը, այդ նւէրների մասին լուրերը հարցրելով՝ շտապում է գործի մէջ խառնել իր խորհուրդներով: «Չատ լաւ է, (գատում էր Մշակը № 52), որ այդ գումարի մի մասով, ինչպէս արդէն նախագծել է պ. Պօղոսեան, պիտի հրատարակեն ժողովրդական-մանկական գրքեր», (ի նկատի առէք որ պ. Պօղոսեան նախագծել էր մանկական և ժողովրդական գրքերի հրատարակութեան յատկացնել ոչ թէ իր նւէրի մի մասը, այլ ամբողջը): Մշակը դիտմամբ աղաւաղում եր իր իսկ քրթակցի գրածը. «Մենք, շարունակում էր Մշակը, կրցանկանալինք, որ մնացած գումարով դրական մրցանակ նշանակէք, ի հարկէ, հրատարակչ. Ընկերութեան որոշմամբ, և այդ մրցանակին տուէր «Գրիգոր Արժուուու մրցանակ» անունը»...

Խել մանկական ու ժողովրդական գրքերի համար նւիրած գումարը՝ միմիայն մի մարդու անունը փառաբանելու համար—դա անիրաւ գործ է: Իր լաւ նպատակից շեղելով՝ ուրեւ մեկի անւան մրցանակ հիմնել—այդ չի նշանակում պատել մէկի անուն կամ յիշատակ. եթէ ձեր նպատակը Արժուուու անւան մի բան կ'ստեղծէր, այսինքն Արժուուու յարգողները այդ նպատակով յատուկ նւէրներ կ'անէին. իսկ այժմ դուք չէք ստեղծում, այլ միայն խլում եք այն, ինչ մանուկներին եր նւիրած: Արքան անպատաւեր գործուէութիւն»...

գ ե դ ա ռ է ս

Թասրն, Երածսուրիւն

Հայկ. ներկայացումներ շուում  
Հայ դերասանական ընկերութիւնը, ղեկավարութեամբ պ. Պետրոսեանի, սկսել է շաբաթական երկու ներկայացում տալ Խանդամիրեանի թատրոնում: Մինչև այժմ խոււմըր երեք ներկայացում է տւել, որոնք մուսքի կողմից այնքան էլ չաջող չէին: Յու-

1. Ի. Իվանովիչ, Վարժաւիւտ երազը. թարգ. ուււ. 1: Թագ. հրատ. Մակ. Ստեփանեան, Թիֆ. 1898, դինը 5 ռ. Տասնուհինգ տարի է, որ Մարիա



լիսի 1-ին չորրորդ ներկայացումն էր. խաղացին Ս. Դիւմալի 5 գործողութեամբ «Քին» դրաման: Այս անգամ թատրոնի դահլիճը, ճաչրէ ի ճաչր լիքն էր և բոլոր տեղերը բռնած: Իրամայի հերոս—տաղանդաւոր դերասան Քինի դերը կատարեց պ. Պետրոսեան:

Պ. Պետրոսեանը վաչելուչ կերպով արտայայտեց իր սրտի վիշտը, իր կրած տանջանքները այն բուռներով, երբ Աննա Դեմբինը (օր. Վարդիթեր) չափըշտակած նրա փառքից և արտակարգ հոգեկան ընդունակութիւններից, խորհուրդ էր հարցնում իր բեմին նւիրւելու մասին: Պ. Պետրոսեան օգտուելով իր զօրեղ բեմական ճաչից, գ. և ե. գործողութեան ժամանակ ազդու տրպաւորութիւն թողեց հասարակութեան վրայ. նա կարողացաւ խելացի կերպով հարածել և ստորացնել խարդախ ու խաբէրաց լորդ Մեկելին (պ. Մամիկոնեան):

Ընդհանրապէս այդ երեկոցեան ներկայացումը լաւ անցաւ, միայն օր. Մարի-Ջրանոյշ իր ծամածուծութիւններով մի փոքր նսեմացրեց ամբողջութիւնը: Պ. Պետրոսեան արժանացաւ բուռն ծափահարութեան և երիտասարդութեան կողմից ստացաւ թարմ ծաղիկներից մի փուռջ:

—Յունիսի 29-ին և ամսոյս 2-ին պ. Խանդամիրեանի թատրոնի դահլիճում կաշացաւ համաբաղաբաղի երպիչ տենոր Աստանեանցի կոնցերտը: Երկու անգամն էլ թատրոնի դահլիճը ճաչրէ ի ճաչր լիքն էր: Ծրագիրը չաջող էր կազմւած: Համերգին մասնակցում էին պ. Եւրիստովը և դաշնակահար օր. Զանչեան: Թէ մէկն և թէ միւսն երգում էին առանձին ողբերութեամբ և զգացմունքով: Հասարակութիւնը բուռն ծափահարութեամբ մի քանի անգամ բեմ հրաւիրեց և նրանք ստիպւած, ճրագրից դուրս ուրիշ երգեր էլ երգեցին:

Աղ - Քար

**ԿԱԼԷՅՅԴՈՍԿՈՊ**

Մշակի անպաշտօն ոճը: Թիֆլ. Կալաֆ. խորհրդար. և զաւթախաղը: Հանրամատչելի բարձր: Երեւանի քան. դպր. շնորհը: Թիֆլ. գիւղատն. ուսումն. հրդեհ:

Մշակը իր 118 համարում, չաչտնելով, որ պ. Ա. Չոպանեան Պարիզում

«Անահիտ» անունով հանդէս է հրատարակելու, աւելացնում է.

„Ժամանակ է մի կողմը թողնել այս Անահիտ, Սոխակ, Ծաղիկ, Պսակ, Մարտի Աստուրակուն և այլ այդպիսի չափից դուրս անհամ անունները, մանաւանդ որ, ինչպէս կեանքը ցոյց է տալիս, մեր մէջ „Սոխակը“ ազուա է դառնում, „Ծաղիկը“ փուշ, „Պսակը“ բռակ, իսկ Մարտի Աստուրակունին Բու Աստուրակունի:

Պարոններ... Մենք շատ բան կասէինք ձեզ, բայց զսպում ենք մեր չուզմունքը, որովհետև յարգում ենք մեր գրիչը. բայց թող պատասխանէ ձեզ այն աւետարանը, որ դուք թարգմանել էք կամենում «իմ տուն պիտի Ասուածոյ տուն կոչւի, իսկ դուք»...

Այն, անհրաժեշտ է որ նա թարգմանի, որպէս զի դուք էլ կարդաք:

Թիֆլիսի քաղաքագլխին դատախազը հարցում է արել թէ արդեօք քաղաքային խորհրդարանում պատահած սկանդալի մասին տեղեկութիւն է տրւած արդարադատութեան ներկայացուցչին, թէ ոչ: Կուսակցական անպատակ ներհակութիւններ անշուշտ կունենան ցաւալի հետեւանքներ և որ զլլստորն է, վատ օրինակ կարող են լինել մեր զաւառական քաղաքային խորհրդարաններում իրաւասունների նիստերին:

Հանրամատչելի ժողովրդական (!) թատրոնը բացւել է Միքայէլեան փողոցում և սկսել են ներկայացումները: Այս թատրոնը շատ հանրամատչելի լինելուն համար է երկի, որ այնքան էլ մեծ հասարակութիւն չէ կարողանում գրաւել: Ժողովրդին մատչելի ընկերտուար և միջակ խումբ կարող է աջողութիւն ունենալ, եթէ գործի ղեկավարներ լինեն ձեռնհաս անձինք և զլլստոր նպատակը շինեն ժողովրդական բարձրագոյն և առաջադիմութիւնը և այդ հնարաւոր է, եթէ քաղաքը նպաստ տալու պաշտպանէ զէթ այն չափով, որ քան ժողովրդական ընթերցանութեանն է հովանաւորում:

Երևանի թեմական դպրոցը տեսուչ չէ գտնում: Աբխոզոմ Յովհաննիսեան, որ «Միակն» էր հրաժարուց, հոգաբարձութիւնը որոշել է լրագրական չաչտարարութեան դիմել: Մեր կարծիքով դպրանոցի շահը պահանջում

է, որ նա ունենայ մի այնպիսի հոգաբարձութիւն, որի մէջ կուսակցական փտած, փաչտացած գլուխներ չըլինեն: Կեանքի թարմութիւն է հարկաւոր: Մի կողմ եղբայրատեաց մաքառումները:

Գիւղատնտեսական ընկ. ուսումնարանի շինութեան մէջ նորերս հրդեհ էր պատահել և բացի այդ մի քանի թանգազին ճաւեր և տունկեր արմատախիլ են արւած: Ոստիկանութիւնը ձերբակալել է այդ դպրոցի մի քանի աշակերտներին: Մենք կարծում ենք որ միայն աշակերտներին բանտարկելը շատ քիչ է, պէտք է բանտարկել և այդ հաստատութեան հովանաւորող Գիւղատնտեսական ընկ. անհոգ մի քանի անդամներին էլ, որոնք փոխանակ գործ շինելու՝ ճոռոմաբանութիւններով փանտաստիկ պրոյէկտներ կազմելով ու իրանց ոէկլամ անելով են աւելի պարզած, քան իսկական գործին նւիրւած:

**Գ Ա Ր Ո Գ Ա Կ Ա Ն**

Կովկասեան դպրոցական շրջանի առաջարկութեան և նահանգական կառավարութեան կարգադրութեան հիման վրայ, ամսոյս 6-ին կատարել է Բաթումի հայոց փակւած եկեղեցական-ճշական դպրոցի կաչքի ընդունելութիւնը, լուսաւորութեան նախարարութեան կարգադրութեան չանձնելու համար:

**Տնտեսական նորութիւններ**

Կովկասեան դիւղատնտ. ընկերութիւնը մտադիր է կազմակերպել երկրագործական գործիքների վաճառումը գիւղական ազգաբնակչութեան համար ձեռնուռ ձևերով: Կենդրոնական պահեստը կրկին թիֆլիսում, իսկ բաժանմունքները Բուժաչխում, Գանձակում և Երևանում:

—Բագւի նաւթահանքերը տւել են մաչիս ամսւայ ընթացքում 38 միլիոն փոլթ նաւթ: Գործող նաւթահորերի թիւն էր 764: Նոր վիշկաներ, որոնք դեռ պատրաստ չեն, թւով 32-են: Բագւից նաւթ են տարել մի ամսում 52 հազար փոլթ, որից 44 հազարը կասպից ծովով, իսկ մնացեալը Անդրկովկասեան երկաթուղիով: Նաւթի փոլթը հանքերում արժէր 8½ կոպէկ:



Լ Ո Ւ Ր Ե Ր

Վեհափառ կաթողիկոսը չունիսի 22-ին ուղևորել է Օշական, վանքերի շինութիւնները տեսնելու համար, ապա այդտեղից գնալու է տեսնելու ս. Յովհաննու և Սարգսոսայ վանքերը, որոնք պիտի վերանորոգւին:

Յուլիսի 8-ին Թիֆլիսի նահանգապետ Փ. Ա. Բիկովը ոստիկանապետի և նահանգական գործերի քարտուղարի հետ այցելեց քաղաքային վարչութիւնը: Պ. նահանգապետը քաղաքագլուխ Գ. Եւանգուլեանի և վարչութեան անդամների ուղեկցութեամբ, այցելեց վարչութեան կանցելեարի բոլոր բաժանմունքները և զինւորագրական գործերի մասը: Իրանից չետոյ պ. նահանգապետը երկար զրոյց արեց ներկայ տարում տեղի ունեցած քաղաքային լուրջ գործերի մասին:

Ռուսիական կառավարութիւնը արգելել է օտարական հայերին Ռուսաստանի սահմաններից ներս մտնել: Բացառութիւն կազմում են անցագիր ունեցող ռուսահայաստակ հայերը: Այժմ հարց է ծագում, թէ ինչ պիտի անեն Ռուսիայում հայ որբերին խնամելու համար կազմած հիմնարկութիւնները:

Պարիզից հեռագրում են, թէ երգեակների դատարանը դատապարտել է Ջոլային, (այս անգամ էլ զինւորական դատարանն էր գանգատել զիֆամացիայի համար) մի տարւայ բանտարկութեան և 3000 իրանկ սուզանքի: Դատաւճռի միւս օրը լուր է տարածել, թէ Ջոլան վաղ առաւօտեան անչայտացել է տնից: Ամանք կարծում են թէ նա փախել է ժընև, միւսները՝ Բելգիա կամ Նոլլանդիա: Իսկ կարծողներ էլ կան, որ նա թագնել է Յրանսիայում, որպէս զի մինչև ապագայ քրիստոթիւնը չբանտարկեն իրան:

Բաֆֆի արձանը, որ կառուցանւում է Խոջիվանքի գերեզմանատանը, պատրաստ կըլինի ամառուայ վերջին, իսկ օնպտեմբերի սկզբին տեղի կունենայ նրա բացումը:

Ծովային նախարարութիւնը մտադիր է բարեփոխել և ընդարձակել Բաթումի նաւահանգիստը:

1897 թւին Թիֆլիսում լոյս տեսած պարբերական հրատարակութիւնների շրջանառութեան գումարը եղել է 252,150 ռուբլի, որից ուսուցող լրագիրներին գալիս է 153,000 ռուբլի: Յիշեալ գումարի մէջ չեն հաշւած այն փողերը, որ շատ անգամ կորչում են հայ թերթերի և նրանց անբարեխիղճ բարեկամների վրայ:

Պետերբուրգ են գնացել մի շարք կովկասցիներ, որոնք իրանց հողերում հանքային շերտեր են գտել: Այդ նորութիւնով խիստ հետաքրքրւում են Պետերբուրգի առևտրականները և խոստանում են փոխառութիւն տալ չիշեալ հողատէրերին իրանց հանքերը մշակելու համար, երբ ձիշտ հետախուզութիւններ կը կատարւին այդ հողերի մէջ:

Մամուլի մէջ ոչ անչայտ տիլին Դուբրովինա իրաւունք է ինչպէս Բագում հրատարակելու մի ամենօրեայ քաղաքական, գրականական և հասարակական լրագիր, Бакаунский Листок անունով:

Կ. Տ. Բարեգործական ընկերութեան քարտուղար պ. Տ. Առաքելեան հրատարակել է իր պաշտօնից: Խորհուրդը որոշել է նոր քարտուղար ընտրել սեպտեմբերին:

Բագում նախահանքեր գնող անգլիական գումարատէրների խնդիրքը թոյլ տալ նրանց հիմնել բաժնետոմսային ընկերութիւն, ելւմտի նախարարութեան մէջ սկզբունքով վճռւած է դրական կերպով: Այժմ մնում է ստանալ Կովկասեան կառավարչատի կարծիքը: որից չետոյ ընկերութեան կանոնադրութիւնը կը քննուի նախարարների ժողովում:

Թիֆլիսի բուսաբանական այգու աւազանի շինութիւնը վերջացած է: Աւազանը, որի մեծութիւնն է 142 խոր. սաժէն, նշանակաւծ է Կովկասեան հազարգլու ձկներ պահելու համար:

Կաշիքէում սկսել է հրատարակել մի քրդերէն ամսագիր «Բիւրդիսսան» անունով, արաբական տառերով (որովհետև քրդերը տառեր չունին): Ամսագրի խմբագիրը քիւրդ իշխան Բեդրիսանի որդին է: Քիւրդ խմբագիրը ծնել է Կրէտէում: Նա լաւ գիտէ ֆրանսերէն: Ամսագիրը լաւ ուղղութիւն ունի:

Պոլսում Սահակ-Մեսրոպեան մրցանակը տրել են հետեւեալ երկու աշխատութիւններին. մէկը Բաբգէն վարդապետի «Եղիեքի մասեճագրութիւն» և միւսը Մուշեղ վարդապետի «Նարեկացու մասեճագրութիւն» ուսումնասիրութիւններին:

Պաշտօնական տեղեկութիւններին նայելով Կովկասում յայ 44 քաղաք, որոնք ունեն միասին մէկ միլիօն բնակիչ: Միջին թւով իւրաքանչիւր քաղաքին հասնում է 23 հազար բնակիչ:

Բագում 1896 թւին աշխատել են բոլոր նախագործարաններում 3,049 բանւորներ և 549 զանազան ծառայողներ: Ընդամենը բնական թիւը 511, երկաթեայ աւազաններ՝ 1,070, որ տեղաւորում են 32 միլիօն փութ նախ, քարէ ծածկած աւազաններ 57, (18 միլիօն փութ), քարէ բաց աւազաններ 82 (7 1/2 միլիօն), հողային ծածկած աւազաններ 23 (62 միլ.) և բաց՝ 93 (102 միլ.):

Այն բոլոր դուխաբորների թիւը, որոնք գաղթել են Անդրկովկասից, հասնում է 3,300 հոգու: Դուխաբորների շատ ընտանիքներ գաղթում են Կիպրոս կղզին:

Բուլղարական իշխան Ֆերդինանդը իր ամուսնու և իշխանագն Բորիսի հետ հասել է Մոսկւա:

Ղազախի գաւառում չայտնել է մի նոր աւազակախումբ, որի պարագլուխըն է ոմն Խեչօ: Այդ խումբը չընչելով իր փոքրութեան, սկսել է վրդովել ազգաբնակչութեան սրամազրութիւնը: Կառավարութիւնը, զիմնել է խիստ միջոցների նրանց ձերբակալելու համար:



Բաթումը օրէցօր հարստանում է գեղեցիկ տներով: Ընկնում են առօրյայի մայրեր: Աշնան սիսեղու են ելել տրական լուսաւորութիւն հիմնել:

«Սասիս» ընկերութեան նաւթահանքը, Բալթանում ծախել են Պետերբուրգի առևտրական բանկին մէկ ու կէս միլիոնով: Առաջելեանի և Բուզազեանի նաւթահանքերը գնել է Թումախեր: Գինը գաղտնի է պահուում:

Չուտով պատրաստ կրլինի «Братская помощь поэт. Армянама» գրքի երկրորդ հրատարակութիւնը, որ նորից մշակած է և բազմաթիւ նոր նկարներով հարստացրած: Որպէս չաւելած կրլինեն հայկական հոգևոր և աշխարհական երաժշտութեան նօտաները: Զրնայելով որ գրքի մեծութիւնը նոյնն է մնացել, գինը էժանացրած է, այն է 3 ռ. սովորական թղթի վրայ, իսկ 5 ռ. թանգագին թղթի վրայ:

ՃԱՆՊԱՐԿՆԵՐԻ ՀԱՂՈՐԴԱՅՈՒԹԻՒՆ

Աւաստապոլի և Եալթայի մէջ երկաթուղի անցկացնելու համար արդէն սկսել են հետախուզութիւններ անել:

Վարսի երկաթուղու վարչութիւնը մտադիր է սկսել Թիֆլիսից մինչև Սանահին երկաթուղու ժամանակաւոր հաղորդակցութիւն: Ընթացիկ երկու անգամ կրգնան ապրանքատար մարդատար գնացքներ:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Նոր-Բայազէ, 22 յունիսի.

«Տարագի» № 18-ում կարդացի Ծաղկաձորից գրած լուրը, որ իբր թէ են թող կամ ունել մի 11 տարեկան տղայի և 15—17 տարեկան աղջկայ պսակ:

Ի միամտութիւն լրատի և «Տարագի» չարգելի ընթերցողների պարտք են համարում չաչտնել, որ պսակող բաճանան իր չաչտարարութեան մէջ տղային 20 և աղջկան 18 տարեկան գրելով հրաման է ստացել պսակելու (19 յունուարի № 111), բայց չունարի 29-ին լսելով որ տղան անչափահաս է, պահանջեցի պսակող բաճանաչից տղայի ծխատիրոջ տւած վկայականը, ուր տղայի տարիքը 16 էր նշանակած, ապա փետրուարի 6-ին ուղեցի չափա-

բերականի սևագրութիւնը տղայի և աղջկայ տարիքը ճիշտ ստուգելու համար և ինձանից անկախ պատճառով հազիւ հնար եղաւ գործը ու արտել մինչև մայիսի 23-ը, երբ տղարկեց № 276 չաչտարարութեամբս Երևանի վիճակաչին կոնսիստորիան:

Աւելորդ չեմ համարում աւելացնել, որ այդ տհաս սրակի մասին կոնսիստորիային չաչտնած է եղել մարտի 12-ին № 129 չաչտարարութեամբ, այսինքն մէկ ու կէս ամիս, առաջ, քան թէ լրատուն լսել է:

Հետաքրքիր լրատուին կրինգրէի հանդիպել ինձ, ես նրան շատ «ոչ վի խիղճ չքսանող» զեղծումներ ցոյց կը տայի իմ յուշատետրիս մէջ, որոնք կատարել են և կատարուում են Նոր-Բայազէտի շրջանում էանանսների ձեռքով:

Յաջողութիւն ցանկանալով Ձեր լրագրի՞ն:

Մեամ ազօր. Մասրէուս վարդապետ:

Խառն լուրեր

НОВ. լրագրի կարծիքով գերմանական կաշարի Երուսաղէմ գնալը նոր դարեշրջան կըստեղծէ արևելեան հարցի պատմութեան մէջ: Այդ ճանապարհորդութեան նպատակն է գորեղ տպաւորութիւն անել որպէս Թիւրքիայում այնպէս էլ ամբողջ Եւրոպայում: Բայց Վիլհէլմ կաշարն ունի և չետազայ նպատակները. նա համարում է Փոքր-Ասիան գերմանական ասպագայ գաղթականութեան ասպարէզ: Միւս մեծ պետութիւնների համար գերմանական քաղաքակնութեան այդ ձգտումները առանձնակի կարն որ նշանակութիւն ունեն, որովհետև ցոյց են տալիս, որ Գերմանիան կամենում է վճռել արևելեան հարցը իր սեփական օգտին:

Նոյն թերթը աւելացնում է, որ Գերմանիան է ներշնչել Վատիկանին (պապին) Պոլսում պապական դիպլոմատիկական ներկայացուցչութիւն ստեղծել: Այստեղ Գերմանիան կամենում է օգտուել կաթոլիկ եկեղեցու ոչժերով: Եթէ Պալեստինիայում և ընդհանրապէս Թիւրքիայում բողոքականները փոքրամասնութիւն են կազմում, ապա նոյնը չէ կարելի ասել կաթոլիկների մասին: Գերմանական կաշարը, որ իրան կաթոլիկների պաշտպան հռչակեց Զինաստանում, սլտարաստ է նոյնը անել և թրքապատակ կաթոլիկների վերաբերեալ (Ազարեանի աչքը լոյս): Եւ այդ բոլորը ինչնու համար, որպէս զի

րէչստագի կաթոլիկ կուսակցութիւնը պետութեան պաշտպան հանդիսանայ գանազան խնդիրների մէջ և միևնույն ժամանակ Գերմանիան մի նոր գործիք ստանայ Բ. Դրան վրայ ազդելու և Զրանսիայի նշանակութիւնն արևելքում թուլացնելու համար:

Բ. Դուռը պատասխանելով չորս մեծ պետութիւններին կրէտէին վերաբերեալ, անւանում է կրէտէի ներկայ ազգային ժողովը «ապստամբների պարագլուխների ժողով», որոնք ծանր վնաս են հասցրել սեփականութեան, առևտրին, արդիւնագործութեան, և ամեն տեսակի բուսութիւններ են գործ դրել մահմեդական համերկրացիների վրայ: Ի վերջոյ Բ. Դուռը չաչտնում է, որ ինքը չէ կարող ընդունել չորս պետութիւնների վճռով ստեղծած նոր դրութեւնը, և իրան պատասխանաւոր չէ համարում հնարաւոր հետևանքների համար:

Երիտասարդ չիխերի «Narod. List» թերթը վճռականապէս բողոքում է կոմս Թունի այն ծրագրի դէմ, որի նպատակն է բաժանել Բուհնիան և Մորաւիան հինգ շրջանների լեզին վերաբերեալ, որովհետև այսպիսի բաժանումը հակառակ է ազգային սիրբունքին, որի հիման վրայ Վենցեալաի թագաւորութիւնը չէ կարելի բաժին բաժին անել:

Սպանո - ամերիկական հաշտութեան հարցը դեռ շարունակուում է արծարծել: Երկու երկրներում էլ հաշտութեան կողմնակիցները օրէցօր շատանում են, մանաւանդ ժողովրդի մէջ: Բայց, ինչպէս երևում է, սպանական շօվինիստիկական շրջանները չեն խրատում: Սանտ-Յագոն արդէն չանձնած է ամերիկացիներին և սպանական այնտեղի գորքերը ճանապարհ են դրած: Սպանիա: Ամերիկական մի նաւատորմից Վատսոնի հրամանատարութեամբ գնում է դէպի Ալյանիա: Արդեօք կըհանդարտուին սպանական շօվինիստները, երբ ամերիկացիք մի կողմից հաւանան կըվերցնեն և միւս կողմից կըոմբակոծեն ուղղակի սպանական ավերը:

Իտալական նոր նախագահ - նախարարը չաչտնել է, որ կառավարութեան ծրագիրն է՝ կարգաւորութեան անսպաշման պահպանութիւնը, հիմնարկութիւնների և հասարակութեան պաշտպանութիւնը, մտքերի հանդս-



տու թիւերը, իսկ արտաբերման քաղաքականութեան մէջ՝ խաղաղութիւն և ամենալաւ շարքերով թիւերները կառավարութիւնը ձգտում է բարելաւել երկնամակն և անտեսական դրութիւնը, նոյնպէս ազգաբնակչութեան մի մասի ծանր դրութիւնը, եւ իր առաջին պարտաւորութիւնն է համարում միջոցներ գտնել այն կարիքի դեմ, որը շատ տեղերում վերջին անկարգութեանց պատճառ եղաւ, եւ որը իսկապէս գործընթացն ունի, որ եւ խոստովանում են անհետքերը:

Բուլղարիայում հակառակորդ մասերը ներկայումս մաքառում է իշխան մեծիկանայի ղեկով: «СВОБОДА» լրագրի իւրաքանչիւր համարում շարժականներ է գործում իշխանի վրայ: Իշխանին մեղադրում են, որ նա անդադար բացակայում է երկրից և անուանում են նրան մի օտարական, որը արժանի չէ բուլղարական ազգի վրաստանութեան:

**մեր պատկերները**

**ԻԲՏԱՆԻ ՎՍՐԻԸ**

Արևելքի դուստրը գեղեցիկ է. արևի ճառագայթները արտացոլում են նրա աչքերից: Բաց նա չէ բառականապէս բնական գեղեցկութեամբ, բնական ճառագայթներով: Սակայն նրան չէ կարելի շատ մեղադրել լափազանց զարդասիրութեան մէջ, որովհետև արևելցու զարդասիրութիւնը, ի միջի այլոց, և տնտեսական պատճառներ ունի: Առհասարակ անպիսի: Երկրներում, ուր սեփականութիւնը, տնտեսական կեանքը պատշաճ չեն, մարդիկ սիրում են իրանց ատելացած թանկագին մետաղների և քարերի վերածել, որպէս քաղաքակիրթ երկրներում ատելացած արժէքաւոր թղթերի են վերածում:

**ԸՆԹԵՐՅԱՆԵՐ ՏԻԿԻՆ**

Երոպայի քաղաքակիրթ դուստրը լուրջ է ոսկեղէն և արծաթեղէն գարդարանքներից: Նա իր ուրախութիւնը, մլխիթարութիւնը, հանգստութիւնը որոնում է ընտիր գրքերի մէջ: Նա բմբուն է, որ ընթերցանութիւնը ամենալաւ կարճութիւնն է, որին ընտելացած մարդը, երբէք չէ կարող առանց նրան ապրել:

**ԸՆԹՏԱՌՈՐ ԸՆՏԱՆԻՔ**

Որքան ասկաւ են այն ամուսնական զուգերը, որոնք երկայնակեաց կաղնու նման, անվրդով անցուցանում են իրանց դարը, շրջապատում են իրանց որդիներով, աղջիկներով, թոռ-

նիկներով: մեկը միւսից առողջ, մեկը միւսից ազնիւ: Այդպիսի մի ընտանիք ենք տեսնում մեր նկարի մէջ: Ու թունամեայ ճերուկը և իր պատար շրջապատած իրանց սիրոց բազմաթիւ պտուղներով, տոնամբում են ամուսնութեան ցինամեակը: Նրանք այժմ էլ սիրում և շարգում են միմեանց սկզբնական սիրով... Անմիտ է մեր դարում տարածուած այն անհեթեմ կարծիքը, իբր թէ անկեղծ սէրը կարող է գոյութիւն ունենալ միայն ամուսնութիւնից առաջ:

**ՀՈՒՆՉ. ԳԵՂԱՎՈՒՆԻՆԵՐԸ ԴԱՉՏՈՒՄ**

Սքանչելի է հունձը, երբ հասունացած հասկերը օրօրում, տառանուզ ևն մանգաղի առաջ, խորձեր կազմելով: Առհասարակ Ռուսիայում կինարմատներն են ցորենը: Հնձում, մինչդեռ տղամարդիկ աւելի ծանր դորձեր են կատարում:

Մեր պատկերը ներկայացնում է մի տեսարան, երբ հնձից յետոյ մատուղհաս կինը ճիճ է տալիս գաւակին, իսկ միւսը օրօրում է իր ծծկեր երեկային: Ռուսուհին անտնին կեանքում, մանաւանդ գեղջկուհին, իր ամուսնու օգնականն է և նոյն իսկ աւելի աշխատասէր ..

**Երգիծաբանական**

**ԱՆՄԵՂ ԶՐՈՅՅՆԵՐ**

— Զարմանալի է, որ «Խելից պատահաս» թատերախաղի ներկայացման ժամանակ թատրոնում ոչ ոք չըկար:

— Ըստ հասկանալի է. մեզանում ոչ ոք այդպիսի պատուհաս չէ ունեցել: Հասկացաւ...

— Ահա բեզ 10 կոպէկ, միայն թէ իսկոյն գինետուն մի վազիր:

— Ես կրկամենալի ուրախութեամբ հիւրանոց վազել, բաց մեր նմաներերին այնտեղ ներս չեն թողնում:

**Զարանիս մարդ**

— Ինչ չարամիտն է այդ պարոնը, կրկին չիշեցրեց նա իմ պարտքը, որ ես վաղուց արդէն մոռացել եմ:

**Մարդասեր փաստաբան**

— Կարելի է ձեզանից մի բան հարցնել. այդ հօ փող չարժէ:

— Հարցնել կարող էք ձրիաբար, բաց եթէ կամենաք՝ պատասխան ստանալ՝ պիտի վճարէք:

**Բժեկի դանդիմում**

Հիւանդ. Խնքող ժամ է սպասում եմ, բաց բժիշկը չէ չաջտնում: Փոքր էլ կրպպսեմ և եթէ դարձեալ չեկաւ, ապա...

Բժեկի ծառան Ապա ինչ կանէք... Հիւանդ. Ապա կըշարունակեմ սպասել:

**Մարդասեր բժիշկը**

Հիւանդ. Յատուկ խնդրում եմ, որ նախ կարգին հետազօտէք ինձ: Բժիշկը. Եթէ ամեն մէկ հիւանդի կարգին հետազօտենք, ապա տէրտէրները ինչով պիտի ապրեն: Զէ որ մենք պիտի ուրիշներին շահն էլ մտածենք:

**Այլ եւ այլ**

Հարսանալու ինքնուրոյն միջոց: Ընդհանրապէս մի փոքրցային տղայ, 15 տարեկան, յայտարարել է յրաքում, թէ ինքը մեծ հարսնուհի չէ, որովհետեւ, կամենում է անուանալ մի գեղեցիկուհու հետ: Փոքր ժամանակուս ստանում է նա փոստով հարիւրաւոր նամակներ հանդերձ գեղեցիկուհիների յուսանկարներով: Զարաձի սյառակին դէմ է շարունակ անակները, և յուսանկարները ի մի խմբով՝ դուրս է գալիս շուկայ և սկսում է ծախել նրանց, հաւասանելով որ «սրանք Ընդհանրապէս քոյր գեղեցիկուհիներն են»: Այսպիսով ապագայ մարդիկ յաւանակաւ դրել է իր գործունեութեան հիմքը:

**Սուրհանդակ**

**Ս. Բաղանդրապոլ. Ս.:** Ասացէ՛ք խնդրում եմ, դուք կողմակից է՞ք սուսուկ ժողովրդի համար պարտադիր անելուն, թէ ոչ: Անուշտ կրքամանակ, որ այդտեղ մի սարսական հարց ապիտ եմ ձեզ Սահակ ուրիշ կերպ պատասխանելու ձեր գործեան՝ օճակարեի է: Ժամանակ է, որ վերջապէս սեր պիտակեց, օգտակար վնասակարից, բարին չարից չոկենք: Այ՛, կան հակազանակներ, որ հոյն իսկ բնութեամբ, անհասի կամքի հակառակ, այժմ է իրագործել այս կամ այն վնասակար:

**Ն. Նախիջուան. Ս.:** Չեզ մանրամասն անակ կրքենք:

**Շ.:** Անկարող եմ բնութեան Երդանակները. եղ չունենեմ այս սարի մեծ վեպերի համար:

**Ռոստով. Ս. Չ.:** «Մեղդեմ Զանգը» ինչ կրքենքի Տարագի առաջիկայ ՌՌ-ում:

**Բագու. Հաս. ժող. գրագ. Վահոյց** է ձեզ ուղարկում ծանուցալի, որ Տարագի պրեմիան Երբ. Թառայեանցների գրավնասանոցից ստանաւ. բարեմանցեք այնտեղից բնութեան:

**Շուշի. Յ. Մ. Չ.:** Տարուս սկզբից Աղբիւր և Տարագ պրեմիաներով 10 ռ. արժէ, դուք ուղարկել էք միայն 8 ռ.: ուրեմն պակաս է 2 ռ.: Չնորակալ եմ ձեր համակրութեան համար:

**Մակա. Եր. Յ. Մ.:** Չնորակալութեամբ ստացանք:

**Իմբազիր-հրատարակիչ՝**  
**Տիգրան Նազարեան**



ԲԱՑԻԱԾ Է Տ Ա Ր Ա Ջ Ի ԿԻՍՍԱՄԵԱՅ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Լ ո յ ս Է տ ե ս ն ո լ մ Տ Ա Ր Ա Ջ Ը շ ա բ ա թ ա կ ա ն ԵՐԵՔ ԹԵՐԹ:

ՏԱՐԱՋԻ 6 ամսեայ բաժանորդագիրը (յուլիսից-յունևար 99 թ.) հանապարհածախսով



Հասցէ՝ Тифлисъ, редакция иллюстр. жур. АГБИОРЪ-ТАРАЗЪ կամ Tiflis (Caucase) Red. des jour. Agbur et Taraz.

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՌՈՐ ԻՒՐԱՆՆԵՐ

Բ. Ն Ա Ր Ա Ս Ր Գ Ե Ն Ե Ր

(Կուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ) շիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից:

Ա. Ա. Ա. Օ. Տ. Ե. Ը.

Բ. Ա. Նաւասարդեան—11-12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) եւ միզասեռ. հ.

Ա. Մ. Չիլովանի—9-10 ժ. այլի, ներքին նկարչային հ.

Ա. Բ. Բուրճեկ—10-11 1/2 ժ.: կանանց եւ երեխան. ծաղիկ պատաստում:

Ջ. Ի. Բարսեղյան—11 1/2-12 ժ. Գ. հ.

Ի. Փ. Պրոսպերի—12-1 ժ. ականջի, կոկորդի, քրի եւ կրծքի հ.

Ա. Վ. Կարապետանց—1-1 1/2 ժ. ներքին եւ երեխայից հ.

Ա. Գ. Գուրկո—1 1/2-2 1/2 ժ. ներքին եւ միզասեռական հ.

Ե Ր Ե Կ Ա Յ Ե Ր Ը

Ա. Մ. Փաղինեան—6 ժ. ներքին եւ երեխայից հ.

Բ. Ա. Նաւասարդեան—6 1/2-7 ժ.

Ա. Ն. Զպենկովի—6-7 ժ. նկարչային (նշխարութեան), վեներ. եւ մարի հ.

Տ. Ի. Բուրճեկ հիւանդանոցում սիստական եւ խոշորագույնական հեռագոտորիններէ կ'անում մկի, իսի, արեան, կարի եւ այլն:

Վճար 50, կ. չբաւորները ձրի. Համախորհրդի (կոնսիլիումի) եւ օպերա-ցիայի համար աւանձին:

Հիւանդանոցի վերատեսուչ՝ Բժշկապետ Նաւասարդեան

Անդրկովկասեան երկաթուղի Մարդասար զննցների երեւելուքիւն

Կայարաններ	Իուրս է գնում			
	Բազուկից-Բաթում		Բաթումից-Բազու.	
Բազու	4.05	12 20	12.59	5.45
Սւլայի	12.15	9.24	4.58	7.56
Գանձակ	2.37	11.54	2.55	5.45
Աղստաճա	5.32	3.18	11.51	2.00
ԹԻՒՔԼԻՍ	9.10	7.48	9.05	10.58
Գորի	11.32	10.33	6.18	6.57
Միլիայլուփ	12.56	12.02	5.00	5.41
Բարում	8.47	8.38	8.20	8.35

Փանօթ. Սեւ քանդակները գիշեր են: Թիֆլիս հասնում են գնացքները՝ Բաթումից 8 ժ. 22 ր. երեկ. և 9 ժ. 07 ր. առ., Բազուից՝ 8 ժ. 26 ր. առ. և 6 ժ. 33 ր. երեկ. Թիֆլիսից գնացքը դուրս է գալիս՝ Բաթում 9 ժ. 10 ր. առ. և 7 ժ. 48. եր. Բազու 9 ժ. 05 երեկ. և 10 ժ. 57 ցերեկ.

Հառուակերմու է սարեկան բաժանորդագրութիւնը

Պատկերազարդ անագրի Ա Պ Ք Ի Ի Մ

Նոր բաժանորդները կրօսանան բոլոր յոյս տեսած ՆԱՔ-ը-յունևարից

Տարեկան գինը 3 ր. (արտասահման 12 ֆո.) Ալբոմ-Ալմանախի (101 ժամանակակից և հետաքրքրական պատկերներ) հետ 4 ր.:

Հասցէ՝ Тифлисъ, ред. Агбуրъ.

Պայմաններ բաժանորդագրութեան

I Տարագի 6 ամսեայ բաժանորդագիրը յուլիսից մինչև յունևար 99 թ. 3 ր.

II Աղբիւրի տարեկան բաժանորդագիրը յունևար 98-ից մինչև 99 յուն. 3 ր.

III Տարագ մարտից մինչև յունևար 99 թ. Աղբիւր յունևարից >

Ալբոմ-Ալմանախ հայրենասէր Իֆիդիսիա պրեմ. } 9 ր.

Լ ո յ ս տ ե ս ա լ Ա Տ Ր Ա Յ Ի Ը Ո Ռ — Շ Ղ Ի Կ Կ Է Կ Ե Ր Ը (Ձիրակեցիների կեանքից):

Թիֆլիսի Կենդանական, Կովկասեան եւ զանազան Բաղաճների գրականաւ. Գոցներում ծախում է

Ա Տ Ր Պ Ե Տ Ի «Արմաս» վէպ բարձր-Հայոց կեանքից գինն. Է. . . . . 2 ր. «Խեղ-Կարապետ» վէպ Հայ-կաթողիկեների կեանքից . . . . . 1 ր. «Չուրան» ողբերգ. օպերայի համար թուրք Հայոց կեանքից. . . . . 1 ր. «Սարաֆ» ողբերգութիւն տանկ. պատ. կեանքից. . . . . 30 կ.



Բ Ա Ր Ս Կ Ի Ի Խ Ա Ն Ո Ւ Թ Թ Այլէ եւ աղամանդէ աւարկաների:

(Գուղիկնակի պրոպագանդ) Բացւած է օպիկ պարանների բաժանումը, նոր անճագողեցիկ պէնարների եւ պ. Գոցների, շինած ուղուց եւ կրիայի ուկրից: Նոյնպէս պատաստում են ակնարկով պատերների համաձայն՝ զանազան պնոցներ եւ փշացածներ վերանորոգում: Ծախում են հեռագրականներ:

ՄԻՔՏԵԼԵՆ ԿԱՐՈՒՔԻ ՎՐՈՅ Ն. ԹՈՒՐԴԱՆԵԱՆԻ ՀԱՌՈՒՍԻ Վանառանցում ստացել են զարնախային եւ ամանախին գգեսներ տրամադրկանց եւ երեխաների համար: գները չափաւոր: 10-6

Աղբիւր-Տարագի գրասենեակում վաճառում են

	Բ. Կ.
ԼԵՈՍ-ԼՄԵՆԻ 4 գոյնով, ազգ. և այլն 101 պատկեր. 2 ր. փոխ. 1 25	
ԱՍԵՍՈՒՆԻ ԿԸՔԻՅ—Ծերենցի Երկունք IX դարու (սակաւածիւ) . . . . .	2 —
Ղ. ԱՂԱՅԵԱՆՅ. Բանաստեղծութիւններ 1 ր. 50 կ. փոխարէն . . . . .	1 —
ՅՈՎԷ. ԹՈՒՄԱՆԵԱՆՅ. Բանաստեղծութիւններ 60 կ. փոխ. . . . .	— 30
ՄԻՆԳ. Բնութեան երգեր և Բանաստեղծութիւններ 80 կ. փոխ. . . . .	— 50
ՍԱՖՕ. . . . .	— 50
Ս. ԻԶՄԻՐԼԵԱՆԻ ճենապակու վրայ պատկերը (սակաւածիւ) . . . . .	10 —
ԳԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ պատկերը 6 ր. փոխ. . . . .	4 —
ԲԵՐԿԱՆԻ, խրոմօ-ակաւարէ, ՌԱՖԱՅԵԼԻ Մաղճաններ, հրեշտակներ, ԲՈՒՔԵԼԵՍԻ Յիսուս և Տիրամայր, ՉԻՐՍՊԻՆԻ Բօմբօ-Չուլիէթ թափանցիկ լուսի դէմ նկար, ընդամենը 8 պատկեր. 2 ր. փոխարէն . . . . .	— 60
ՄԻՔՏԵԼԻ ՆԱԼԱՆԻՆԵԱՆՅԻ մեծաղիթ փոտո-գրաւիւր պատկերը . . . . .	1 20
ՀԱՐԵՍԻ ԱՂՋԻԿԸ ոսկէ շղթաներում . . . . .	— 50
ՄԱՅՐԻԿԻ ՆՆԱՐԱՆՈՒՄ խրոմօ . . . . .	1 50
ՉՄԵՆ . . . . .	— 20
ԱՐՏԱՋԷՍ Բ. թագաւորի մուտքը Ի Հոմ. . . . .	— 30